

3384

618

u - 28

4 Tonchu
1896

2010

12002

ԲՐՅ. Ֆ. ԱԼՊՐԵԼԻԹ

Հ 229

618

Ա. 28

(Արևկան սեռին յատուկ)

223

ԽՈՐՀՔԴԱՏՈՒ

375

375

Ծիր. մաս

ՄՆՆԴԱԴՈՐՆԱՐԱՆԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՇՈՅՑ ՌՈՒԺՈՒՄԸ
ՕՆԱԿԱՇՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ՍԵՌԱՅԻՆ ԴՐԴՄԱՆ ՈՒՂԻՂ, ԿԻՐԱՐԿՈՒԹԻՒՆՆ
ԵԽԱՅԻՆ ԵԽԱՅԻՆ ԵԽԱՅԻՆ

Թարգմանեց Գերմաներեն
Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՅՐԵԼՈՒՄԱՆ

1896

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՑՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԵՒ ԹՂԲԱԿԱՑՈՒՍՆՑ
Ը. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն
27, Ֆինանսներլար Խօզուուն, Կ. Պալիս



37051-66

ر ف عمومیه نظارت جلیله سنك ۴ توز ۳۱۲ و ۴ صفر ۳۱۶
تاریخی و ۲۲۷ نوامبری رخصتا به سیله نشر او لشدر

Այս զիրքը բարգևանելուս զիխաւոր շարժա-
ռիրը, մեր տղայց եւ պատանեկաց առողջական
արգահանելի վիճակին, կարեղի եղածին չափ,
բարւովնան օգնութիւն մ'ընենալ փափառ եղած է :

Անտառակուսէլի և թէ այդ դառն վիճակին
պատճառն աղ ծնողաց եւ կամ պաշտպաններուն
անզիտուրիւնն է :

Արդեն հեղինակին նպատակն ալ, կատարեալ
պարզաբանութեամբ ի բաց վանել է սղայոց սե-
ռային առողջութեան սպառնացող վտանգները։
Բայց որովհետեւ մանկական եւ պատահեկան տա-
րիքը դեռ անկարող է լվարնել այդ մասին գրուած-
ները, հեղինակը չափահասներուն ձեռքով ու-
ղած է հասնել նպատակին եւ ասու համար ձեռի
առած է արական սեռն ընդհանրապէս, եւ այդ
առիր նոր ու օգտակար շատ զիտելիներ աւել-
ցուցած է չափահասներուն համար ալ։

Արդ, չափահաս ընթերցող մը բող վստահ
ըլլայ թէ գրես իւր սեռային կեանին հպմար
զիտանեզոյն զիտելիքներ բաղեցէ զատ, խեղամուտ
պիտի ըլլայ նաեւ այնպիսի հրահանգներու, որ
կարող պիտի ընեն զինքն հսկելու եւ առաջնոր-
դելու իւր որդուց սեռային առողջութեան :

ԹԱՐԳՄԱՆԻՁԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սերմը՝ ամողմիքներու մէջ մղուած անգոյն հեղուկ մ'է : Ամողմիք կամ ձուանք, որ փոշտին մէջ կը գտնուին, էրիկ մարդուն սերմդագործութեանը կարեւորագոյն գործիքներն են : Սերմը մարդկային նոր էակներ կազմելու յատուկ չէ միայն, այլ մարդկային մարմնոյն համար ուրիշ նպատակներ ալ ունի :

Այս հիւթը անհատին պահպանման եւ կատարելագործութեան ալ կը ծառայէ : Անիկա արեան մէջ խառնուելով եւ աղկէց ալ ջիղերու մէջ մըտնելով կ'աւելցունէ մեր մոտաւորական կորովը, եւ նոյն իսկ զանազան արտայայտութեանց պատճառ կըլլայ մեր հոգւոյն մէջ, որ առանց անոր անկարող պիտի ըլլար անոնց :

Այս համառօտ տեսութեամբ կարելի է ըմբռնել թէ մարդկային մարմնոյն յօրինուածութեան համար այդչա՛փ կարեւորութիւն ունեցող այդ հիւթը որպա՞ն պէտք է խնայել :

Սերմին հոսումը կամաւ եւ ակամայ տեղի կ'ունենայ : Կամաւ հոսումը ծննդագործարանին յայտնապէս զգացած զրգութեամբ կամ զուգաւորութեամբ եւ կամ զիջութեամբ հոսումն է : Ակամայ հոսումը կամ երազափորձութիւնը զանազան պարագաներու բերմամբ եւ զիստաւորապէս քունի մէջ տեղի կ'ունենայ, չափահաններուն վրայ : Այս պատահական հոսումը փոխանակ առողջութեան վիասակար ըլլալու, մասամբ տեղը կը բռնէ այն գործին զոր բնութիւնը իրբեւ ստիպողական պէտք

մը ըրած է : Մէկ քանի պարագաներու մէջ միայն այդ ակամայ սերմներթութեան յաճախաղիպութիւնը եւ թուլութիւնը իբրեւ հիւանդութիւն պէտք է ճանչնալ այնչափ ատեն որ կարենայ արդեւք ըլլալ սերնդագործելու , ինչպէս որ պիտի տեսնենք ապա :

Ասկէ զատ լոկ գիջութիւնն ու երազափորձութիւնը չէ որ կը տկարացունէ ծննդագործարանները , այլ՝ սեռային հաճոյից վայելքին յաճախաղիպութիւնը որ կրնայ պատճառ ըլլալ նաեւ այնպիսի տարախոխիկի հիւանդութեանց , որք կը կործանեն մարմնոյն առողջութիւնը երբ սիսալ դարմանուին : Ո՞վ չի ճանչնար ափրողիսեան ախտին սոսկալի հետեւանքները :

Ծննդագործարանաց տկարացումը տակաւ եւ աստիճանաբար կը գոյանայ էրիկ մարդուն վրայ , եւ յաճախ կրկնուող կամաւ կամ ակամայ սերմներթութիւնք աստիճանաբար եւ տակաւ կը կորզեն կեանքին լաւագոյն հիւթերը . նոյն իսկ ափրողիսեան հիւանդութիւնք երբ պէտք եղածին պէս չգարմանուին , տակաւ այնպիսի ապականութիւնն մը յառաջ կը բերեն , որ նախապէս մարմնոյն նուազ ամուր մասերուն կը յարձակին եւ ապա աւելի ամուր , իմա սոկորներուն մէջ տեղ կ'ընեն եւ վրէժինդիր աւերտմներ կը պատճառեն :

Եւ որովհետեւ այս ամենը տակաւ առ տակաւ կ'ուժաւորին եւ կը տկարացունեն մարմնը , այնպէս ալ ադոնց բարւոքումն ու բուժումը մէկ օրէն միւսը չի կրնար ըլլալ , այլ՝ յամբարար եւ համբերատար դարմանումով :

Այդ չորեաց ձգրիտ քննութեան հետ , բաւական ալ համբերութիւն պէտք է . մանաւանդ՝ կանոնաւորապէս գործածելու է տնօրինուած դեղերը , եւս կենալու է շուայտութիւններէ , որք կրնան աւելի ծանրացունել հիւանդութիւնը , եւ վերջապէս ժուժկալութիւնը ձեռքէ ձգելու չէ այն ամէն բաներու մէջ որք թէ դուրսէն կամ ներսէն կը ներգործեն մարմոյն :

Մասնաւոր ուշաղրութիւն կը հրաւիրեմ կերասութեան վրայ . յաճախ , բայց միշտ չափաւոր ուտել . Պէտք է փոշտակալ մը գործածել որ կը նուազեցունէ ծննդագործարանաց գրգռութիւնը : Պէտք է պաղ ջուրի մէջ լսդնալ , ծննդագործարանները լուսալ պաղ ջորվ եւ պաղ ջուր խմել : Ուտեսիքի եւ խմելիքի աննշան չափազանցութիւն մը կրնայ վեցամսեայ դարմանով բարւոքուած տկարութիւն մը վերստին ետ զարնել եւ նոր գիջագործութիւն մը , բանազրոսիկ միանդամու զուգասորութիւն մը վերստին յերեւան հանել ծննդագործարանաց տկարութիւնը , խանգարել բարւոքումը որ ձեռք բերուած էր դեղերու եւ դարմաններու երկարատեւ գործածութեամբ :

Իսկ այն երազափորձութիւնք որ բնութեան մէկ գործողութիւնն են , նուազ վեսասակար ըլլալով հանդերձ երրեմն ալ նոյն իսկ բարերար ազդեցութիւն մը կ'ընեն մարմնոյն վրայ , երբ երեւակայութեան կամ մարմնոյ մեքենական գրգռութիւններէ յառաջ եկած չըլլան :

Երբ անզամ մը այսպիսի բնական հոսումները կանոնաւորուին այլ եւս չեն բթացուներ հոգին ու

մարմինը . Ընդհակառակն անոնց զգացումն ու ներ-
գործութիւնը առողջարար կ'ըլլան եւ մարմինը կը
զարգանայ ու վրայ կը դնէ :

Ես այնպէս կը կարծեմ թէ արու մարմնոյն
համար անհրաժեշտ պէտք մը չէ երազափորձու-
թիւնը , ինչպէս շատեր կ'ուզեն հաստատել , բայց
որպէս զի առողջ , հիւթեղ եւ ուժեղ մարմին մը
երազափորձութեան չենթարկուի , պէտք է որ շա-
րունակ չափաւոր աշխատութիւն ունենայ :

Բայց մեր այս օրերուն մէջ ո՞ւր է մարմնոյն
յարմար աշխատութիւն . մանաւանդ ներկայիս մէջ
ուր միտքն է որ ի վեսս մարմնոյն կ'աշխատի եւ
այն է միայն որ կը զարգանայ :

Վաճառականին , իրաւագէտին , գիտունին ,
արուեստաւորին կենցազավարութիւնը չունի այն
շարժումը զօր պէտք է տալ մարմնոյն չափաւորու-
թեամբ եւ լաւ բաժնուած ժամանակակիցներով :

Եւ քանի որ այդ էական շարժումը կը պակոի ,
երբ երիտասարդաց մեծագոյն մասին իրենց
բնակարանին մէջ աստ անդ քալելը , եւ օրուան
զբաղմունքը , մանաւանդ մեծ քալաքաց մէջ ,
շարժում անուանել ուզենք , իրնա՞նք ըսել թէ
առողջութեան օդտակար է քաղաքաց ապական-
եալ օդը , զոր կը չնչեն :

Եւ միշտ արագընթացութիւն պահանջող իրենց
գործերը , ենթակայ չէ՞ն ըներ իրենց մարմինները
քրտնելու եւ դիւրաւ պաղ առնելու :

Ժամերով ոտքի վրայ կենալը , ցուրտին ու
փուրին , տաքին ու տապին աստ անդ վաղելը
մարմնոյն օդտակա՞ր շարժումներ են :

ԳԼՈՒԽ Ա.

Ծննդագործարանաց տկարացման վրայ
ընդհանուր տևուրինե

Երիկ մարդուն սերմը մարդկային մարմնոյն աղ-
նուագոյն հեղուկն է , որ ժամանակէ մը ետքը
արգասաւորիչ համառութեան կը հասնի : Ամոր-
ձիքներուն մէջ կը պատրաստուի այդ : Սրբնու-
թեան ատեն այդ հեղուկին մէջ , մանրադէտով ,
փոքրիկ որդեր կը տեսնուին , որոնց ներկայութիւնը
ցոյց կու տայ թէ սերմը կատարելապէս հասուն է ,
վասն զի արգասաւորիչ կարողութիւն չունեցող
սերմին մէջ այդ որդերը չեն գտնուիր : Արգասա-
ւորիչ սերմին մէջ նուրբ , եթերական նեարդեր
կան , տեսակ մը չոգի որ բաւական է , անկատար
մերձաւորութեամբ իսկ , յլացունել կինը , եւ ասոր
ալ փորձերը շատ կան :

Սերմին խնայողաբար արտաքսումը ոյժ կու տայ
մարմնոյն , վասն զի բնախօսներուն կարծեաց հա-
մեմատ , վերատին արեան մէջ կը մտնէ :

Երիտասարդ մը երբ սերնդագործելու կարող
ըլլայ , հետեւեալ նշանները կ'երեւին իւր վրայ .
ծնօտը , կուրծքը , անթամէջները կը մապոտին ,

ձայնը կը գտառնայ , աչքերը կը շողազին , դնդեր-ները կը զօրանան , հոգեկան ոյժերը կը զարգա-նան , երեւակայութիւնը վասվառն վիճակ մը կառնու եւ դէպ առ իգական սեռն միտում մը կը ծնի իւր մէջ : — Թէ՛ մարդոց եւ թէ անասնոց մէջ կուրսերը (խատըլ) իգական բնութիւն մը կ'ու-նենան . այս պարագան յայտնապէս կը տեսնըուի ներքինիներուն վրայ , որոնց բարակ ձայնը կը զար-մացունէ զի՞ւզ : Միեւնոյն նմանութիւնը կը գտնենք նաև որձատներուն , ցուլերուն եւլն . վրայ : Մար-դիկ ներքինացուցմամբ՝ կը կորսնցունեն արիութիւն եւ արմնութիւն , կորով եւ մեծ գործերու համար եռանդ : Սրարիչը մերձաւորութեան գործին մէջ դրած է ամենաքաղցր հաճոյքը , ամենաքաղցր հեշտանքը . այ՛ , բայց ադռնք ալ շուայտութեան , հեշտագործաթեան կը մոլորեցունեն մարդս . մինչ-դեռ անասունը իւր բնական դրդման հետեւելով աւելի խնայողաբար կը վարուի . Սերմին յաճա-խակի եւ կանխահաս կորուստը կը նուաստացունէ մարդս , եւ կը տկարացունէ մարմնով ու մտքով : Մասնաւորապէս , ծննդագործարաններն են որ ա-ւելի կը մվասուլն սերմի յաճախակի հոսումէն :

Այս պատճառաւ է ահա որ ներկայ ժամա-նակիս մէջ ծննդագործարանաց տկարացումը կա-րեւորագոյն տեղ մը կը բռնէ այն հիւանդութեանց մէջ , որք իրենց յամրազդեցիկ բայց մահաբեր ներ-գործութեամբը յանչափս սոսկալի եղած են մարդ-կային ցեղին :

Ընթելյողն այս դրբի սարունակութենէն պիտի սովորի ոչ միայն այդ վտանգաւոր հիւանդութիւնը

նուազեցունելու եւ ինքզինքն կատարելանէս անկէ-հեռի պահելու կարելիութեան եղանակը , այլ պիտի սովորի նաեւ փորձել ինքզինքն թէ մի՛ գուցէ այդ տեսակ հիւանդութեան մը ենթարկուած ըլ-լայ : Պիտի խրատուի նաեւ , երբ դեռ ենթարկուած չէ անոր , զգուշանալ այդ չարիքէն եւ զգուշացու-նել նաեւ իւր որդիները — եթէ հայր է — այդ զեղ-ծումներէն որք կրնան շատ չարեաց պատճառ ըլլուլ :

Սրական սեռին համար գրած եմ այս գիրքը որ կը պարունակէ այդ սեռին յատուկ հիւանդու-թեան մը զանազան տեսակները , նաեւ այն հի-ւանդագին վիճակները որոնց կ'ենթարկուի մարդ կենցաղվարութեան եղանակով կամ կազմուածքի պատճառաւ :

Սրգարեւ , ցաւալի է որ մեր օրերուն մէջ կը աւենանք շատեր որք ամէն օր բժշկի կը դիմեն , գեղ ու դարման կը խնդրին : Սյդ «հիւանդ» ները եթէ ոչ ամուսնական հաճոյքը վայելելու կատա-րելապէս անկարող , բայց ծննդագործարանաց ջղատման , առ այդ պէտք եղած զգայութեան պակասութեան վրայ կ'ողբան :

Կան նաեւ որոնց ծննդագործարանք կատարե-լապէս թմրած եւ անպիտանացած են , եւ ցաւա-լին այն է որ այդպիսիք ամուսնացած են , կա-նամբի են , անկարող՝ լծակցական պարտականու-թիւններ կատարելու , եւ ենթակայ՝ ամէն ատեն իրենց անկարողութիւնը , իրենց չայրութիւնն զգալու . . . :

Դժբաղդաբար , ժամանակիս չարիքներէն մին

ալ ամուսնութեանց շատ ստկաւաթիւ ըլլալն է . «Վասն զի էրիկ մը իւր կինը եւ հետեւորդ զաւակները իւր վիճակին համեմատ սնուցանելու համար շատ բաներու պէտք ունի . » եւ վիճակի այս համեմատութիւնը գերազդարար այնչափ կ'ընդարձակի , որ ամենէն պարկիչտ վիճակներու մէջ իսկ այդ բանաձեւին կը հանդիպինք : Զարմանալին այն է որ չի հարցուիր երբէք թէ ամուսնացողք զօրաւո՞ր են . աշխատութեան եւ զաւակագործութեան կարո՞ղ են . այլ գլխաւոր հարցումը սա՛ թէ երիտասարդը կարո՞ղ է աղջիկը սնուցանելու , կամ թէ՝ աղջկան օժիտը է՝ այնչափ որպէս զի էրիկը անոր զարդարանքին հոգը չունենայ :

Եւ հաւատացէ՛ք , ստորինէն սկսեալ մինչեւ բարձրակարգ ընտանիքներու մէջ իրաց վիճակը այս է : Այսու զիւրին է մակարերել , հասկնալ , թէ անսանական — բնական պէտքին գոհացումը , ամուսնութիւն անուան տակ , անհրաժեշտ չարիք մ'եղած է , որուն դասուպարտութիւնն ու դարմանը բարյախոսներուն թողլով , անոր զեղծումները միայն առարկայ կ'ընենք մեր ուշադրութեան , վասն զի մենք , իրեւ թիշէլ , զայն ալ իրեւ ճշմարիտ ամուսնութիւն կը համարինք : —

Ճշմարիտ է թէ շատեր թէեւ կրնան վիպիքարկան սիրոյ մէջ , ամուսնական պարտաւորութեանց կատարման համար պէտք եղած տոկունութիւնն ունենալ , բայց կան շատեր ալ որք գրեթէ առաջին օրէն կը պարտապին , եւ այս վիճակ իրենց համար կրկնակ տժգոհութեանց պատճուռ կ'ըլլայ , վասն զի հաճոյքին վայելքը կորսնցունելէ զատ ,

մարդնուզ եւ մտքով բթացած ըլլալու մասին զգացուած ամօթն է որ կը վհատեցունէ զիրենք , եւ անհափաքելի , սոսկալի ձեռնարկութեանց պատճառ կ'ըլլայ . . . :

Ծննդագործարանաց այս տկարացումը ուրիշ շատ հիւանդութեանց ալ պատճառ կ'ըլլայ , ինչպէս՝ տեւական սերմնակաթութիւն , միզելու ատեն սերմի կորուսո , (եւ այդ ատեն մէզի յետամնաց կաթիւներուն հետ միզանցքին մէջ խտղտեցուցիչ զգացում մը տեղի կ'ունենայ) մերձաւորութեան անկարողութիւն եւն . եւն : Ասոնց ամէնը թէպէտ ափրողիտեան հիւանդութեանց կարգէն չեն , բայց շատ անդամ զանազան հիւանդութեանց իբրեւ ափատանչան կը համարուին եւ ամենուն ալ պատճառը ծննդագործարանաց միջոցաւ մարմնոյն տկարացումն է :

Իմ բազմամեռյ փորձառութեամբս հտմողուած եմ թէ չզային հիւանդութեանց ենթակայ անձանց չորս մասին երեքը սեռային հաճոյքք ժամանակէն առաջ վայելած եւ այդ պատճառաւ ուժաթափ ըլլալուն համար ենթարկուած են այդ վիճակին : Ասոողջաբան հեղինակներուն գրեթէ ամենքն ալ խորին ուշագրութեան առարկայ ըրած են սեռային հաճոյից վայելքին չափազանցութեան ախուր հետեւանքները : Ասոնք այնչափ շատ , այնչափ սոսկալի եւ յաճախատէպէս են , որ ամենաթեթեւ ուշագրութեամբ իսկ կարելի է տեսնել ամենուրեք , Ախոնդական նոսաներ ինչպէս նաեւ հոգեկան հիւանդութեանց ամէն տեսակները , յիշողութեան տկարութիւն , սեւամաղձութիւն , մենամոլութիւն ,

մկնաձգտութիւն, ստնդանք, շարժլախտ, լուսնուտութիւն, գլխու եւ անդամոց դողդովում, գլխուպայտ, թալուկ եւ մինչեւ իսկ անդամալուծութիւն, այս', հեշտանքի շուայտութեանց տիտու եւ մահաբեր հետեւանքներն են :

Մարդկային կեանքը թունաւորող այս աղետաւոր խանդարմանց պէտք է միացունենք կարգ մը ուրիշ վնասներ : Ով որ ինքզինքն չափազանց մերձաւորութեան կամ օնանականութեան կուտայ — եւ այս երկու քին ալ հետեւանքները նոյն են — մարմնով զարդացած ըլլայ թէ ոչ, անբնական գրգռութեամբ կը գրգռէ իւր ծննդագործարանները :

Սնոր մարտողութիւնը կը խանդարի, կերածը ստամոքսին մէջ չի մարտուիր եւ իսկական վիճակին մէջ գուրս կու գայ վերատին : Սիսորժակը կը գոցուի, ամերով մարմինը կը նիշարնայ, արիւնը կը ջրոտի եւ քանակութիւնը կը նուռազի — եւ այդ է մարմնոյ ընդհանուր գունատութեան պատճառը — դէմքը կը դալկանայ, շրմունքները կը գունատին, աչքերը խորը կ'իջնեն, կը մարին եւ կ'արցունքոտին . դէմքին ոսկորները գուրս կը ցցուին, քունքն ու այտերը կը խոռոչանան, ոնդունքն ու ականջները կը չորնան ու կը պաղին եւ ճակտին մորթը ժամանակին առաջ կը խորչոմի : Հսողութիւնը կը դժուարանայ, տեսողութիւնը կը ակարանայ, աչքերը կը մթագնին . հոտոսելիքը, ճաշակելիքը եւ զգացողութիւնը կը կորսնցունեն իւրենց փափկազգայութիւնները կամ բոլորվին կը կորսուին . յիշողութիւնը կը ակարանայ, իւր գոր-

ծողութիւնները կ'ոչնչանան եւ ենթական քիչ մը վերը յիշուած հիւանդութեանց կը մատնլուի :

Երբ այս ամէն հիւանդագին վիճակները իրոք այդ գեղջումէն յառաջ եկած են ու հիւանդը չի գիտեր թէ այդ է իւր հիւանդութեան պատճառը, պարտի փորձառու բժշկի մը քննել տալ ինքփինքն, վասն զի նաև կրնայ հասկնալ պատճառը : Այս պարագային մէջ ալ, դժբաղդապար, անկարելի է ընդհանրական գեղ մը որոշել հոս, վասն զի ապրուելիք գեղը՝ պատճառը քննելէ եւ վճռելէ ետքը միայն կարելի է տնօրինել :

Երբ հիւանդը վերահասու ըլլայ թէ իւր այդ ծանր վիճակին պատճառը իւր գործած գեղջումն է, պարտի ճարտար բժշկի մը դիմել եւ կամ բերանացի կամ գրաւոր կերպով բացարձիւլ իւր նախակին կենցաղավարութիւնը ամէն մանրամասնութեամբ, մանաւանդ այն պարագաները որք իւր վրայ տկարացուցիչ ազգեցութիւն մ'ունեցած կը բնան ըլլալ : Այսպիսի մանրամասն եւ ճշմարիտ խոստովանութիւմբ միայն բժիշկը կ'ինայ յարմար գարման մը տնօրինել իրեն : Որպէս զի բժիշկը կարենայ բժշկել հիւանդը, զիսնալու է թէ նա իւր երիտասարդութիւն ամէջ գիտութեան ախտէն վարակուած ըլլալուն համար, թէ՝ իւր չափահատութեան առաջին տարիներուն մէջ կանխահատ մերձաւորութեան գեղջումներ գործած ըլլալուն համար ենթարկուած է իւր հիւանդութեան :

Տգետ բժիշկներ կան որք հիւանդին ցայնժամ ունեցած կենցաղավարութեան մանրամասնութեանց վրայ հարցումները ընելու ճանձրութիւնը յանձն

չառնլով, մինաձգտական նոպաները, զգածման խանգարութները եւ ասոնց նման որիշ շատ հիւանդութիւններ — որոնց պատճառը նոյն իսկ յիշեալ զեղծման հետեւանքն եղալ տկարութիւնն է — անյարմար երակահատութեամբ, լուծողական գեղրով, խարանագեղով եւ ուրիշ զանազան արտաթրիչ գեղերով դարսնած, աւելի ծանրացուցած են հիւանդին վիճակը եւ այնպէս անբուժելի վիճակի մը հասուցած են, զոր ապա վարպետ բժշկին ճարտարութիւնն իսկ չէ կրցած բարոքել:

Սրական սեռին տկարութիւնը կրնայ կեանքի առաջին տարիներուն մէջ պատրաստուիլ եւ ապա տակաւ յառաջնալ: Սխալ է այն կարծիքը թէ հիւանդութ ծնողաց զաւակը հիւանդութ կըլլայ միշտ: Շատ անգամ տեսած եմ տկարագոյն ծնողներ որք զօրաւոր զաւակներ ունեցած են, եւ ընդհանակառակի՝ առողջ ծնողներ որք հիւանդութ զաւակներու կեանք տուած են: Ճշմարիտ է նաեւ որ մանուկ մը առողջ մօր որովայնին մէջ կրնայ տկարանալ, ինչպէս նաեւ տկար մօր մը արդանդին մէջ գտնուած սաղմն ալ, յղութեան ատեն, պատշաճ վարմունքով, առողջապէս զարգանալ:

Այն մայրերը որք պարելով, չափազմոց կերութնուով, կաւք նստելով, զուգաւորութեան զեղծումներով եւ որիշ այս տեսակ բաներով կը վկասեն իրենց անձին, տարակոյս չէ կայ թէ այդու սաղմին ալ վկասած կըլլոն. եւ շտա անդամ մանուկը ամբողջ իւր կեանքին մէջ կը կրէ այդ անբնական վարմունքներու ամբողջ ծանրութիւնը, վասն զի ամբողջ հիւթերը դէպի հոն կը քաշուին, եւ ամէն

վնաս, մօրմէն աւելի մանկան վրայ կ'ազդէ: Այսպէս, ահա, կրնայ ըլլալ որ զօրաւոր եւ առողջ կին մը տկար, հիւանդութ եւ կիսամեռ զաւակ մը ծնի: Ընդհանակառակն տկար կին մ'ալ, կտննաւոր կենցաղավարութեամբ, կրնայ զօրաւոր ու առողջ զաւակ մը ծնիլ, վասն զի իւր ամէն հիւթերը զաւելին կու տայ եւ այդու առողջ ու աճուն զարգացում մը կը պատրաստէ անոր: Մրգարեւ, մայրը պիտի նեղութիւ աղկէ եւ առողջութեանը մեծագոյն մասու վրայ պիտի տայ, բայց մենք կ'ուղենք ապացուցանել թէ այդպիսի տղայ մը կրնայ զօրաւոր

ըլլալ:

Կրնայ ըլլալ նաեւ որ տղայ մը մօրն արգանդին մէջ անխնամ մնալով իւր մարմույն մէջ ունենայ շորեւիցէ հիւանդութեան մը պատճառը, որ ապա Օթեթեւ շարժառիթով մը անոր ծննդագործարանաց վրայ աղդեցութիւն ունենայ:

Նոյն իսկ տղան ծնելէն ետքը, առաջին մանեւթեան մէջ, այնպիսի բաներ կան որք տրամադիր կ'ընեն անոր ծննդագործարանները ապագայ տկարութեան: Անմիտ գայեւակներն ու ազախները, — չեմ կրնար ըսել թէ անխնդօրէն, վասն զի իրենց ըրածին ինչ ստորիճան վկասակար ըլլալը չեն գիտեր — աղայոց ետեւի կողմը կը ծեծեն, ծննդագործարանաց հետ կը խաղան եւ այդպիսի խաղը տուքներով կը քնացունեն զանոնք: Ատիկա շատ վկասակար գործ մ'է եւ մանկան տարիքին պահանջումէն աւելի հիւթ կը զրկէ զէպի ծննդագործարանները, որով յաջորդ տարիներուն մէջ մանուկը կանխահաս զրկութիւննմը կ'առնենայ: Ասկէ



զատ սոսկալի վնաս մ'ալ սա է որ մանուկը այդ խաղը ինքնիրէն սովորելով, խելքը հասնի չհասնի, իբրեւ զրօնանք կը գործադրէ զայն, եւ չափահասութեան ատենն ալ՝ իբրեւ հեշտանք, եւ այդու գիջութեան մէջ կը մոլորի *) :

Այս տեսակէտով աւելի մեծ ու չափազանց վնասաբեր չարիք մ'է նաեւ տղայոց սրբանին (ետեւի կողմին) գաւազանով զարնելու: Ասիկա առաջին ուղի մ'է որ գրգռութիւնը ծննդագործարանաց կը տանի, եւ ես իմ բազմամեայ փորձառութեանս մէջ շատ օրինակներ ունեցած եմ եւ համոզուած եմ թէ գաւազանով ծեծը պատճառ է որ գիջութեան գաղափարը մուտ գտնէ տղուն մէջ: Զաղկման այդ պատժէն, որչափ ցաւագին ալ ելած ըլլայ, անոր համար չեն ուղեր խուսափել տղայք, վասն զի անոր հետեւրդյոյժ հաճոյական մէկ զդացումը կը մասցունէ ցաւերը: Մեր օրով ալ չիկա՞ն սիրոյ ասպետներ եւ վաւացատ հեշտասէրներ, որք սիրոյ հաճոյքը վայելել թելաղուելու համար, զանազան

*) Կ'արէէ որ շատ բան զրուի այս մասին: Անզամ մ'եւս ըսենք թէ ծնողը չափազանց ուշաղիք ըլլալու են այդ զործին: իբրեւն հակողութիւնը անպակաս ընելու են միշտ աղախնոց վրայէն եւ երբէ թող տալու չեն որ մանչ տղայք անոնց հետ պատին: Դէպէ մը պատահած է ինձ, որ շատերուն համար կրնայ իբրեւ դաս ծառայել զգուշութեան: Օր մը բարեկեցիկ ընտանիքի մը այցել հրափրուեցայ. մէկուկէս տարեկան սիրուն ու կայտառ մանչ մը ցուցուցին ինձ, որուն փոքրիկ անդամին մաշկը այնպէս ուղեցած ու բորբռած էր, որ թեթեւ մէկ շարժմամբ ամենասատի՞ ցաւեր կը պատճառեր տղուն: Վերջապէս դարմանեցի եւ կասկածներս յայտնեցի մօրը. ապախինը ճանրուեցաւ իւր պիզդ գործ խոստովանելէ ետքը:

տեսակ գրգռիչ գեղերու հետ ինքզինքնին ձաղզ կել, մարձել եւ նոյն իսկ կոխոտել կու տան: — Հեշտանքը, որպէս թէ աւելի նրբօրէն զգալու համար գործածուած զանազան միջացներն ըսելն ու լսելն իսկ նողկանք կը պատճառէ մարդուու:

Ասկէ զատ զգուշանալու է նաեւ՝ մէզը կամ բնական կարիքը արտահանելու անհոգանալով, երկար ատեն զանոնք պահելէ ու ինքզինքը բանելէ, վասնզի ադով ալ գիւրաւ գրգռում յառաջ կու գայ ծննդագործարանաց մէջ:

Հոո՛ տեղը չէ մանկավարժական դիտողութիւններ ընելու, թէ չէ պիտի ըսէի թէ դաստիարակք ընդհանրապէս փոխանակ մարմնական պատիժներ տալու տղայոց այնպիսի պատիժներ տնօրինելու են, որք միտաքին ազգեն եւ անձնապատութիւնը գրգռեն: Ա. Թօթահարութիւնը, այո՛, լու միջոց մ'է կրթական գործին մէջ եւ շատ լաւ կրնայ մարմնական պատժոյ տեղը բռնել:

Երբ մանչ տղայ մը — եւ արդէն այդ սեռին համար է մեր այս ամէն գրածները — այնչափ մեծացած է որ այլ եւս կը զգայ ինքզինքն, եւ զեռ որեւիցէ գրգռութիւն չէ զգացած իւր ծննդագործարանին մէջ, եւ ուրիշէ մը չէ մոլորած եւ չէ ձանցած դեռ այդ կորստարեր համոյքին գոյութիւնը, այն տաեն անոր առաջին զգացողութիւնը երազի մը պէս պիտի թուի իրեն, այդ գրգիռը այնչափ սաստիկ չպիտի զգացուի իւր մէջ որ զայն իւր վրայ փորձելու մոլորելով իբրեւ համոյք գործադրելու չար ունակութեան ենթարկուի, եթէ պատանին իւր Ֆնողաց կամ լաւ ու խղճամիտ ու պատանին իւր

սուցչաց հսկողութեան տակ գտնուած է եւ առիթ ունեցած չէ սեռերուն տարբերութեան գործնականապէս խելամտիլ, այն ատեն համառօտ եւ կառնաւոր տեսութեամբ մը, անոր հետաքրքրութիւնը չգրգռելու համար, գործը հասկցունել պէտք է իրեն, եւ, ահա՛, այդու իւր բնական ամօթղածութիւնը պիտի չներէ իրեն ինդրոյն աւելի խորը թափանցել, թէ ինչո՞ւ համար ունի այդ զգացումը, այլ հանդարտ կերպով պիտի սպասէ մինչեւ որ բնութիւնը հրաւիրէ զինքն իւր կեանքին ընկեր մը վիտուել եւ գտնել:

Բայց քանի՞ պատանի եւ երիտասարդ ունինք այս օրինակ կրթուած : Մանչ ու աղջիկ, քոյր եւ եղբայր միասին պառկեցունելու անբարոյական սովորութիւնը, երկու սեռերուն՝ ժամանակէն առաջ զիրար ճանչնալը որ հետաքրքրութենէ յառաջ կու գայ եւ առաջին յոյզերուն առիթ կ'ընծայէ, գիշութեան գաղափարին ընդելացումը, զոր տղայք մասնաւորապէս վարժարաններէն կ'ընդունին միշտ, սպասաւորաց ընդհանուր զեղծումը, որով տղայոց այնպիսի բաներ կը ճանցուին զորս պէտք չէ որ գիտնան, ահա այս ամէնը դարաններ են, ուսկից գրեթէ անկարելի որ խուսափի տղան, որ դեռ բան չգիտէ եւ չի իրնար ալ գիտնալ թէ որչա՛փ մահաբեր է այդ խաղը իւր ամեռղջ կեանքին համար : Եթէ մարդ կարողանար ապագային մէկ հայելին ներկայացունել իրեն, որուն մէջ կարենար տեսնել տղան այն սոսկալի վիճակը որ վերապահուած է այդպիսի վատ ունակութիւն ունեցողին համար, նա արսափելով պիտի հեռանար իւր մոլութենէն :

Դիջութեան հանաչումը տղան սովորապէս թէն մինչեւ 12 տարեկան հասակին մէջ կ'ունենայ, կամ ուրիշ տղայոց հետ ունեցած յարաբերութեամբ եւ կամ պատահաբար բնազդմական շարժմամբ մը : Բարոյախօսուն ու բժիշկը այս մասին շատ գժուաբաւ կը գտնեն ճշմարտութիւնը : Այդ մոլութեան ենթարկուողները գրեթէ չեն հանչնար իրենց սխալը, եթէ գործին վրայ ըլուսարանուին ու չի խրատուին : Ծնողքներն ալ խարեպատիր ապահովութեան մէջ կը մնան մինչ այն օր իրենց որդուցն առողջութիւնը գեռ չէ վատաթարացած շարագուշակ պարագաներով :

Երբ մանչ զաւակ մը պատանեկութեան տարիքը թեւակոխած է եւ ցայնժամ իրապէս զերծ մնացած է գիշութեան մոլութենէն, այդ ատեն ալ տկարացման ուրիշ աղրիւր մը կը բացուի իւր առջեւ . այդ ալ դայեակներուն եւ սպասաւորներուն ձեռամբ յառաջ եկած վասաներուն պէս աղիտարեր է, ըսկել կ'ուղեմ ընթերցումը : Մեր այս ժամանակն մէջ ապականութեան սապարէզն ընդարձակ է : Երիտասարդութեան համար ժանաւախտ մ'են այն վէպերը, որք վիտութեան կը միտին թէ պէտ զայն յայնապէս չեն ցուցուներ : Եւ ադոնք, այժմ գժբաղգաբար, իրբեւ գիտական գիրքեր, ընթերցման մեծ մասը կը գրաւեն : Ընթերցատուներուն առատութիւնը եւ այդ պատճառաւ ընթերցողին տրուած դիւրութիւնը երեւակայութեան ազատ թուիչ կու տայ եւ կը գրգռէ երիտասարդները, որք այդու շատ գիրաւ միջոց կը գտնեն իրենց մէջ արծարծուած բաղձանքը գոհացունել : Ասոր հա-

մար է որ ապահանած է բարոյականութիւնը, եւ գրեթէ հետքն անգամ մնացած չէ այն ամօթղածութեան եւ առանձնասիրութեան, որք, էր երբեմն, յատուկ էին իդական սեռին, որք անոր պատիւը կը կազմէին եւ որք մեր վէպերուն մէջ նկարագրուած կը գտնենք թէեւ, բայց իրական կեանքին մէջ շատ հազուագիւտ են այժմ։

Երջանկութեամբ շատ տարիներ ապրելու փափաքով երիտասարդն ինքզինքը պաշտպանելու է այն համբարուներին որք ամէն կողմէ իւր վրայ կը յարձակին։ Զգեստներու այժմեան ձեւերն ալ նուազ փորձութիւններ չեն այն նորհասներուն համար որք գեռ նոր կը թեւակոխեն կիրքերու աշխարհը եւ իրեւ տղայ ապահարկ կը մնան, Մերկ բազուկներ, հողանի կործքեր, գրեթէ միին վրայէն հազնուած բարակ բաճկոն մը, եւ աղկէ աւելի բարակ շրջազգեստ մը, ինչպէս կը տեսնենք քաղաքաց թէատրոններու գերասանուհեաց եւ պարանցիկներուն վրայ, գեռահաս եւ եռանդուն երիտասարդին ցանկութիւնը չե՞ն գրգռեր միթէ, եւ ո՞վ կրնայ հանդուրժել, գիմադրել այդպիսի յանկուցիչ հրապոյրներու։ Ճշմարիտն ըսելու համար, իրեւ բժիշկ, պէտք կը զգանք ինդրել ոստիկանութենէն որ իւր հսկողութիւնը տարածէ նաեւ այդ անպարկեշտ զգեստներուն վրայ եւ արգիլէ զանոնք։ այդ ատեն միայն, թերեւս դադրին մոլորութիւնները եւ անաղարտ մնայ բարոյականութիւնը։

Տղայոց եւ երիտասարդաց մոլորութիւններն ու անոնց վտանգները աստիճանաբար տեսնելէ ետքը,

տեսնենք նաեւ թէ իրենց չափահաս այրութեան հասակին մէջ իսկ, մեր այս ժամանակներուն մէջ ինչպիսի վտանգներ կան, որոնց ենթակայ չէին այնչափ, անցեալ դարերու մէջ։

Արդ, այսպէս թէ այնպէս, վերջապէս կ'ամուսնանայ երիտասարդը, եւ ահա, կը կարծէ թէ այլ եւս զերծ է ամէն վտանգէ եւ այս մտածմամբ՝ կատարեալ իրաւոնքով կը սկսի վայելել հաճոյքը։ բայց ինչպէս։ — Սյրութեան առաջին կատարեալ ոյժով, մէկէն միւսէն լածէն զատ որիշ գաղափար չունենալով բնաւ այդ հաճոյքին եւ անոր վայելքին վրայ, կը կարծէ թէ մերձաւորութիւնը պարտք մ'է զոր պարտի կարելի եղածին չափ յաճախ վճարել իւր սիրելի առարկային։ Իւր համամեռ ընկերներուն յորդորները, երիտասարդաց դիւցազնական անվկանդ գօրութեանց պատմութիւնները, երիտասարդ կանամրիներու պարծենեկութիւնները շատ դիւրաւ կը համոզեն զինքն անոնց հաւասարելու ջանալ, անոնց պէս ընելու պարտաւորիլ եւ երբ այդ վերջններուն մէջ գտնուին իսկ այնպիսի անամօթներ, որք լծակցական գաղտնիքներուն նույիրականութիւնը ոտնակոխ ընելով, որը իւր կնոջ անյագութիւնն դժգոհի — որ թերեւս սուտ է, եւ կամ թէ ինքն է պատճառը — որը իւր անընկճելի ոյժը գովարանէ, առանց զիտնալու սակայն որ մօտ է իւր անձնատուութիւնը, ահա՛, այս մեր հաւուղեղն ալ անոնց ըսածին հաւատալով կը կարծէ թէ այդ է լծակցական կեանքն ու ասպարէզը։ Սյս օրինակը, ահա՛, երիտասարդն ալ լսելով կանոն կ'ընէ իրեն եւ երկուքն ալ — ա-

մուրին ու կանամբին — մտքէ իսկ չեն անցուներ թէ մէկ քանի տարի ետքը այլ եւս անկարող պիտի ըլլան ընծայել իրենց ամուսնոց, ինչ որ բնութեան իրաւանց համաձայն, անոնք կրնան պահանջել իրենցմէ, — չափաւորութեամբ սակայն : . . . եւ կը չիջանի իրենց առնական ոյժն ու կրորվը զորս կարելի էր ծերութեան մէջ իսկ ունենալ, եթէ խոհեմութեամբ եւ խնայողաբար վարուած ըլլային

Այդ վիճակին ալ կը հետեւի այն սոսկալի ժամն, յորում կանայք իրենց ցանկութեանց պատճառաւ անհաւատարիմ կ'ըլլան իրենց արանց :

Վհատութիւնը, լքումը կ'ոչնչացունէ ամէն սէր : Ապերջանիկ ամուսնութիւնք, կորատարեր ամուսնալուծութիւնք, ընտանեկան կործանումներ անվիշտ հետեւանքներն են սիրոյ պակասութեան : Մարմնական անկարողութիւնն եւ ջղային դրութեան տկարութիւն իւր ամէն սոսկալի տեսակներովն ու վատթարութեամբ, ամէնքն ալ Փիզիքական են, եւ վայ անոր՝ երբ բարոյական վիշուերն ալ վրայ կը հասնին, երբ կինը այլուր կը գնատէ իւր վասպին փոխարինութիւնը, եւ այրը աղետալի անկման կը մատնուի՝ նոր, իրեն համար գեռ անծանօթ գեղերով ինքվինքը, իւր թոռմած մարմինը զրգուելու համար :

Բայց երբ կինը առն համար միշտ նուիրական մնայ, երբ կինն ալ փոխարձաբար եւ չարունակ նկատէ զայրն իրբեւ գանձ մը, որուն հետ խնայողաբար վարուելով միայն կրնայ մնալ նա իրեն համար ճշմարիտ գանձ մը, երբ երկուքն ալ ներքին մտերմութեամբ, իրարու հանդէպ այն յար-

գանքն ունենան որ ամուսնութեան մէջ շատ պիտանի է եւ կը բարձրացունէ, կը նորոգէ միշտ անոր խանդաղատանքը, այն ատեն, վստահութեամբ կ'ըսեմ թէ անասնական հաճոյքի դիմելու չափ չեն ստորևնար, այլ զիրար կը զրկավարեն այն ատեն երբ բնութիւնը, բարձրագոյն խանդաղավառութեան մը մէջ, պահանջէ զայն իրենցմէ :

Սյո տեսութեամբ՝ սիրոյ մէջ անձնազարումը քաղցր հաճոյք մը կ'ըլլայ անոնց համար որք գիտեն թէ ցյագութք յափրացումը զզուանք յառաջ կը բերէ :

Ծեր էրիկ մարդոց՝ գեռատի աղջկանց հետ ամուսնանալու խնդրոյ մասին սա՛ դիտել տալ կ'ուզեմ թէ՝ թէպէտեւ այդպասի ամուսնութիւնն մը երիտասարդ էակի մը ջերմութեամբն ու արտաշնչումը կրնայ զօրացունել այրը, բայց սա պէտք է լաւ գիտնայ թէ իւր մանկամարդ կնոջ քով չափազանց խնայողաբար վարուելու է իւր ոյժին հետ, վասն զի հակառակ պարագային մէջ կը խրամատէ իւր առողջութիւնը եւ բացարձակապէս չի կրնար վերակազդութուիլ : Կը ճանչնամ շատ ծեր կանտիմիներ որք սիրոյ չափազանց մեծարանքներ ընելով քաղցրամիզութիւն կոչուած անբուժելի հիւանդութեան ենթարկուած եւ վերջապէս մեռած են : Այդ անձինք բաւական զօրաւոր կազմ ունէին, բայց իրենց կիները չափազանց անձնութեամբ մեծարել ուզելով Փիզիքական սէրը, եւ իրենց էրիկներն ալ ուզելով գոհացունել անոնց փափաքը, պարտասած, անբուժելի հիւանդու-

Թեանց հնթարկուած եւ վերջապէս մահն եղած է
իրենց հանդիսաբ :

* * *

Շատ տագնապալի եւ վտանգաւոր է նաեւ այն
պարագան երբ այրը շատ երկար ժամանակ մնայ
ամուրի, եւ բոլորովին հեռի իգական սեռէն :

Սրգահատելի է նաեւ այն մարդուն վիճակը
որ իւր մանկամարդ ու կրակոտ կնոջը մահուանէ
ետքը վերաստին ամուսնանալ ուզելով, ամուսին
կընտրէ աւելի մանկամարդ եւ, որ աւելին է, յայ-
րատ կին մը, զոր գոհացունել շատ գժուար կ'ըլ-
լայ իրեն, եւ ինքզինքին կը վնասէ չափազան-
ցութեամբ :

Լծակցական վայելքին չափազանցութիւնը ո՛չ
միայն անկարող կ'ընէ այրն այդ հաճոյքը վերաստին
վայելելու, այլ կրնայ ի գերեզման գահալիժել զնաւ:

Այս տիսուր վիճակին օրինակը դեռ անցեալ
տարի 40 տարեկան անձի մը վրայ տեսայ: Այդ
անձ մտնկամարդ օրիորդի մը հետ ամուսնանալով
իւր տարած յաղթանակներուն եւ անսպաս ոյժին
վրայ կը անսպարծէր ինձ: Իսի իրեն թէ այդ չա-
փազանցութիւնը սուզի պիտի նատէր իրեն. ութ օր
ետքը եկաւ ինձ ըսելու թէ դժուարաշնչաթենէ կը
նեղուէր: 14 օրէն բաժնուեցաւ իւր կնոջմէն եւ
հակառակ ամէն դարմաններու վեց տմիս յետոյ
մեռաւ: Եւ որովհետեւ ուժեղ անձ մ'էր նա, հա-
մոզում գոյացոցի թէ չափազանցութիւնն էր որ
պարտասած էր իւր ջղային դրութիւնը եւ զինքն
մահու դրան յանձնած:

Ընթերցազ թող չմոռնայ այս դէպքը: Ամուսնայեալ մարդու մը համար շատ զիւրին է
զգալ թէ չափազանց յոգնութիւնը որչափ կը վնասէ
իրեն :

Մարդ ամուսնանալուն պէս իրեն սկզբունք
պէտք է ընել չափաւորութեամբ վարուիլ: Ասոր
արդիւնքը կրկնակ է. նախ թէ կինը չափաւորու-
թեան կը վարժուի եւ հեղաբարոյ կ'ըլայ, եւ երկ-
րորդ իւր անձնական առողջութիւնը չի վեասուիր:

Եթէ ծակցական հաճոյից վայելումէն ետքը
թուլութիւն, անհանգստութիւն, ծանրութիւն, ոլ-
նացաւ յառաջ գոյ, այն ատեն մարդ պէտք է իւր
բոյժը չափաւորութեան մէջ վիճուէ, եւ իւր ամու-
սինն ալ առ այն վարժեցունէ:

Պուառւն, թիսոյ եւ ուրիշներ սերմին յաճա-
խակի կորուստին պատճաւաւ մարդուս մարմնոյն
հիւծման եւ տկարացման վրայ սոսկալի նկարա-
գրութիւններ ըրած են. եւ ասոր ապացոյցը իգա-
կան սեռէն աւելի՝ արական սեռին վրայ կը տես-
նենք յաճախ:

Սերմին յաճախակի վատնումէն տկարացած հեշ-
տասէրը կը կորսնցունէ իւր ախորժակը. սաամոքը
կը հիւծանդանայ, վասն զի յոգնած, թուլցած են.
իւր ջիզերը: Մարմինը կը ծիւրի, սննդաւոր ուտե-
լիքներն իսկ չեն կազզուրեր զինքն: Կանակին վրայ
մինչեւ ծոծրակը այնպիսի խտղուեցուցիչ զգացում
մը կ'ունենայ, որպէս թէ մրջիւններ քալէին մարմ-
նոյն վրայ: Մէջքի ցաւեր կ'ընկերանան աղոր,
պնդութիւնը վրայ կը հասնի, ջրվաթութիւնը ցա-
ւերով եւ կոկծաւոր տեղի կ'ունենայ. ծննդագոր-

ծարանք ընդհանուր թուլութեան մը մէջ կ'իյնան, եւ վերջապէս տակաւ կ'անսփատանան։ Սերմը, ինքնարերաբար կ'արտաքսուի գեղեցիկ կնոջ մը տեսքովը ըսկ։ Խակ խնայողութիւնն ու չափաւորութիւնը ամէն ջիղեր միահանուս ցնցող ուժգին շարժմամբ տեղի կ'ունենայ, որ այդ ալ կ'ոգեւորէ գործարանները, արեան ցջանը կ'երագացունէ, չնչառութիւնը կը զօրացունէ, մարմինը կը տաքցունէ եւ շատ անդամ ալ մարմնոյն ամբողջ մակերեւոյթին վրայ առաս քրտինք մը կը հանէ։ Արդ, այդ զօրաւոր ցնցումը երը յաճախ տեղի ունենայ, բնականէ որ ամբողջ ջիղերը կը թուլնան եւ . . . ջղային սոսկալ հիւանդութեանց պատճառ կ'ըլլան։

Այն երիտասարդք որ շատ կանուխին անձնատուր կ'ըլլան հեշտանքին, կը կորսնցունեն իրենց երիտասարդգական աճումը, չուտով կը սկսին ծերութեան յատուկ կ'բան ենթարկուիլ. իրենց ամբողջ անդամները կը սկսին դողդունել, եւ մինաճգտում, կաթուած, ջրգողութիւն եւ հիւծախտ բաժին կ'ըլլան իրենց։

Եւ որպէս զուգտորութեան ատեն արեան ցջանը կ'երագի, այդ պատճառաւ երակները կ'ուռին եւ դէպի կուրծքն ու գէպի գլուխն արիւն կը խռնըուի, աչքերը կը փայլին եւլն. եւլն, Ահա այս բաները անքնական, զօրաւոր կերպով եւ յաճախադէպ տեղի ունեցած ատեն երակներու ընդլայնում, սրտի բարախում յառաջ կու գան։ Թոքերն արեամբ լցուելով կրնայ ըլլան որ սաստիկ արինահոսութիւն, հիւծախտ հետեւին։

Թիսո, Պէուհավ, Հօֆման, Սէրաք, Ցիմիէր-

ման, Հուփէլանտ, Ֆէնտէրմօնտէ եւ ուրիշ բժիշտներ հեշտախտաւորաց սոսկալի նկարագրութիւններ կ'աւանդեն մեզ եւ կ'ապահովցունեն թէ — ինչ որ փորձառութեամբ մենք ալ կը հաստատենք — ո՛չ միայն մարմնոյ ոյժերը, այլ մարդուս մտաւոր կարողութիւններն ալ կ'ոչնչանան . յիշողութիւն, իմացականութիւնն եւ դատողութիւն, վճռողականութիւն ամէն բան կը չիջանին . հիւանդը կը նեղուի մտքի ցրտածութենէ, կը լինի ասկուշ եւ վերջապէս . . . յիմար : Զգայարանաց ոյժերը՝ լուղութիւնը, տեսաղութիւնը տակաւ կ'անհետանան . բայց երեւակայութիւնը միայն կը մնայ մոլի եւ անպարկեցտ գործունէտութեան մը մէջ եւ շարունակ հեշտախտիկ ու գրգուիչ պատկերներու նոր մեղքեր կը ներկայացունէ։ Այս վիճակէն կը վնասուի զըլխաւորապէս որովայնը որ մարդուս ամբողջ մարմնոյն մատակարարութ ծածուկ գործարան մէկ : Վերոյիշեալ վիճակին պատճառաւ այդ գործարանին պաշտօնները կանոնաւորապէս չեն կատարուիր . պընդութիւն եւ թանջք փոփոխակի իրարու կը յաջորդեն, աղիքները կը մաղասապատին, ստորին որովայնի երակները արեամբ կը լցուին, կ'ուռին եւ ասոնց հետեւորդ հիւանդութիւնները վրայ կը հասնին : Սակէ զատ՝ յառաջ կու գան աեղական բորբոքումներ, ամորձիքներու ուռեցք, միզանքէն՝ մաշսային արտաթորում, դժուարամիզութիւն եւլն։

Փօխանակ անհոգ գտնուելու պէտք է հետազոտել եւ պատճառը գտնել, երբ երիտասարդ մը ախոնդանութեան եւ մելամաղձութեան, առանձնասիրութեան, մարդատեցութեան եւ երկշուու-

թեան ու անսովոր կարճատեսութեան հակամիտութիւն ցոյց տայ . մանաւանդ՝ երբ նախապէս եռանդուն մտքի տէր ըլլալով , յանկարծ իմացականութեան եւ սրամատութեան պակասութիւններ ուշնենալ կը սկսի . երբ մարմնոյ ոյժը պակսի , իւր թարմ երեւոյթը կորսուի , մարմնական խօթութիւններ երեւան ելնեն , աչքերուն փայլը աղօտանայ , նայուածքը երկչոտ ու աղօտ ըլլայ , շարժումները՝ դինդակ , եւ ժայլուն ալ դառն . երբ անպատշաճ գիրքեր առնու , իւր խորացած աչքերուն ըուրջը մթագոյն շընանակ ունենայ , դէմքը գունատ , շարժումը թոյլ , դժուարաշարժ ու ծանրատաղտուկ ըլլան , ջրզերու հիւանդագին գրգռութիւն մը , գիւրազգայութիւն , բարկացուութիւն , գդդմնութիւն , զլսու ցաւ , թալուկ , թեթեւ իմն յոգնեցուցիչ աշխատութեանց ատեն դժուարաշնչութիւն ունենայ , եւ այս ամէնք՝ առանց ակներեւ պատճառներու : Մի՛ աարակուօիք որ աղոնք իրենց գաղտնի սրամանառներն ունին , որոնց իրականն ու էականն է սերմնահոսութիւնը :

Պէտք է մասնաւոր հակողութիւն ընել մանչերու եւ աղջկանց վրայ , երբ երկար ատեն անխօսուկ առանձնութենէ կալորդին եւ իրենց պատանեկան կեանքին սովորական վասվուունութիւնը չեն ցուցուներ , ձայներնին կերկերեալ է եւ իրենց դէմքին վրայ պատիկ փշտիկներ ունին . մանչերուն փոշութոյլ , վար ինկած եւ ծննդագործարանաց վրայ քրտինք եւ փշտիկներ գտնուին : Մածուկ մեղքին յայտարար նշան կը ճանչցուի նաեւ մազերու թելերուն ճեղքուիլը , քթի ծայրին քրտնի-

լը , աչքերուն ուսենալը եւ կորեակ կոչուած փըշտիկները :

Այսպիսի մոլեկան ունակութեանց յառաջացման մէջ մարմնոյն ծիրումը ակներեւ է միշտ . թարախաւոր պալուրներ կը ծածկեն մարմնը . թալուկը յաճախագէտ վիճակ մը կ'ըլլայ . մազերը կը թափին , աչքերուն տեսողութիւնը կը նուազի , յամից տենդեր իրարու կը յաջորդեն , եւ վերջապէս՝ մահը կու գայ վերջ տալ այդ պայքարին :

Գաղիոյ մէջ , մանաւանդ Փարիզի մէջ , բժըշկաց քննութիւններովը հաստատուած է թէ խելագարներուն մեծագոյն մասին պատճառը հեշտասիրութիւնն եղած է , եթէ ոչ զինովութիւնը , որ հեշտանքին սիրեկի ընկերն է . վամն զի հեշտասէրը գրգուիչ եւ ջերմաբեր ըմպելիքներով եւ համեմուու ջեռուցիչ ուտելիքներով հեշտանքին ու ցոփութեան մէջ վատնած հիւթերուն տեղը դնել կը խորհի . ասոր համար է որ հեշտանք , արրեցութիւնն եւ խնճոյք իրարմէ անբաժան երրեակ մը կազմած են :

Հեշտանքին հետեւանքները սա յամրազգեցիկ բայց կեանքի հիմնաքարը խախոսով եւ ի գերեզման առաջնորդութ վերոյինեալ չարիքները չեն միայն , այլ սուր եւ արագապէս մահաբեր հիւանդութիւններ ալ յերեւան կու գան որք անբուժելի եւ աւերիչ նկարագիր մը կ'առնուն , եւ ասոնք ալ սա հետեւեալներն են . սաստիկ տենդ , մինակծկում , փըսիում , ուղղատապ , յանկարծագէպ խելագարութիւն , կատաղութիւն , վերնոտութիւն , կաթուած , եւ ասոնք՝ անբնական կամ չափալանց հեշտանքի

վայելքին ատեն եւ կամ անկէց ետքը յերեւան կու գան եւ կանամբին կամ երիտասարդը արագասահ ընթացքով գերեզման կ'առաջնորդեն :

Ծննդագործարանաց տեղական ցաւերն են՝ առաւուշափ թութք, միզանցքէն՝ արեան եւ թարախի հոսում, միզանցքի ամորձիքներու եւ յառաջագեղերու բրրոքում եւ ատոնց կարծրանալը, ուսիկց յառաջ կու գայ ամութիւն այսինքն սերնդագործելու անկորողութիւն :

Եթէ ամորձիքներու հիմքում իսկ չպատահի, որով կատարելապէս կ'անհետանայ սերնդագործելու կարողութիւնը, այդ գործարանք ուրիշ հիմնագործեանց կ'ենթարկուին, որ կը տառապեցունեն ենթական եւ կը չքացունեն անոր կեանքի խինդը : Շատեր, մանաւանդ գիջագործք, կը նեղուին ամորձիքներու յարատեւ շարժնութենէ, այնպէս որ ասոնք գէպի վար եւ դէպի վեր կը քաշուին, առանց ցաւի կամ որեւիցէ ազգեցութիւն ունենալու սերնդագործական կարողութեան վրայ . բայց այդ ալ շատ նեղացուցիչ վիճակ մ'է : Զիվը այսպիսի գէպեր շատ գարմանած ըլլալով, աւանդած է մեզ իւր փորձառութեանց արդիւնքը որք համաձայն են իմիններուս :

Դժբաղպարար, փորձառութեամբ հաստատուած է թէ այսպիսի անձինք իրենց երիտասարդութեան ատենի շուայտութեանց համար կը զղան եւ ինք զինքնին կը կշուամբեն, մելամաղօրէն կը ձնաձրանան կեանքէ եւ կամ լու եւս, անձնուսպանութեան կը դիմեն :

* * *

Սեռային հաճոյից չափազանց կամ կանխահան վայելքը այնչափ վնասակար է, որչափ օգտակար է ընդհակառակն, այդ հաճոյքին չափառը վայելքը . առանց տարակոյսի կարելի է ըսել թէ այդ ատեն մարդուս ամէն գործարանաց կորովը կ'աւելնայ, ախորժակալը կը բացուի, մարսուսմիւնը կը կանոնաւորուի եւ հետեւապէս՝ ընդհանուր ոննդառութիւնը : Ուղեղն աւելի կարող կ'ըլլայ աշխատելու եւ երջանկութեան եւ յոյսերու խորհուրդներով կը զբաղի : Մարդ քաղցրաբարայ եւ բարեացակամ կ'ըլլայ : Սեռային հաճոյից վայելքը որչափ օգտակար եւ հետեւապէս ալիսանի է մարդուս, այնչափ ալ կործանարար է ծերոց համար . այս մասին յամաւող ծերերը վրայ կու տան միշտ իրենց կեանքը : Զուգաւորութիւնը ծերոց համար ամօթարեր է, նողկացուցիչ է : Ծեր մը պարտի խոհեմ գտնուել այդ գործէն եւս կենալու համար այն ժամանակին, յորում իւր ցանկութիւնը բթացած է եւ ինքն անոր վատանդաբեր հետեւանքներուն ենթարկուելով միայն կրնայ գոհացունել զայն :

* * *

Գիշերային սերմներթութիւնք, որք հեշտախտ տիկ երազներէ ետքը եւ կամ առանց ասոնց տեղի կ'ունենան ինքնաբերաբար, բնական կամ անբնական սիրոյ չափազանց վայելքին սովորական հետեւանքն են որ սաստիկապէս ուժաթափի կ'ընեն մարմինը : — Առողջ, պարկեշտ երիտասարդաց եւ ամսւրի արանց վրայ ալ կը պատահին սերմներամսւրի արանց վրայ ալ կը պատահին սերմներ-

թութիւնք, բայց ադոնք օգտակար են առողջութեան եւ 14 օրը, 4 շաբաթը մէկ անգամ եւ կամ աւելի հազուադէպ կը պատահին. այդ պարագային մէջ մարմինը չի կրսնցուներ իւր ոյժն ու առողջութիւնը :

Բայց երբ այդ հոսումները յաճախադէպ ըլլան, զգալի տկարութիւն, նիհարութիւն, ամբողջ գործարանաւորութեան մէջ անհանգստութիւններ յառաջ գան, այդ ատեն ըսել է թէ այդ սերմներթութիւնք վասսակար են եւ ծննդագործարանաց տկարութեան մը պատճառաւ եւ կամ թէ գուցէ հեշտոնքի չափազանցութեան հետեւանք են : — Ասկէ զատ սերմներթութեանց պատճառը ինչ որ ալ եղած ըլլայ, եւ որչափ աւելի կամ նոււազ յոռի պարագաներու մէջ տեղի ունենան, գարձեալ այդ ինքնարեր եւ յաճախադէպ հոսմունք այնչափ վասսակար են որ մարդ պէտք է ադոնց առաջքն առնու նոյն իսկ եթէ առնական կարողութեան չմնասեն :

* * *

Սիրոյ կանխահսս կամ չափազանց վայելքին վրայ պէտք եղած զգուշական դիտողութիւններն ընկելով հանդերձ չենք կրնար չպարսաւել երիտասարդաց առնական հասունութեան տարիքին մէջ երարատեւ ժուժկալութիւնը, եթէ սա՝ ծննդագործարանային արմատացած տկարութիւն մը եւ կամ կատարեալ անկարողութեան հետեւանք եղած ըլլայ Առնական կատարեալ հասունութեան մէջ

երիտասարդը երբ ոյժովն ու առողջութեամբը իւր քսանները տարիքին մէջ կը գոնըուի, յաճախ ստիպողական եւ ուժգին յուզացմներով իւր հակառակ սեռին մօտենալ կը գրգռուի :

Երբ այր մարդուն մարմինը կատարեալ զարդացման մէջ է, մօրուքը բուսած, ձայնը հաստըցած, մարմնոյն շարժութիւնը զօրաւոր ու զիւրաթեք են, սեռային դրդումի առանց արուեստական պատճառի զգացուի եւ զայն գոհացունելու պէտքը ուժգնապէս արթննայ իւր մէջ, այդ ատեն ժուժկալութիւնը վտանգաւոր հետեւանքներ կ'ունենայ : Լաւ կազմաւորուած եւ սերնդագործելու կարող մարդը պէտք է ամուսնանայ . իսկ եթէ բնութեան այդ ստիպողական պահանջման ականջ չկախէ, այն ատեն հիսծիչ, սպառիչ ջեռուցումներ յառաջ կու գան, եւ ասոնք, եթէ առանց սերմներթութեան տեղի ունենան իսկ, միզանցքին, ամրոգիքներուն եւ յառաջագեղձերուն մէջ բորբոքումներ, կծկումներ, անձկացումներ յառաջ կը բերեն եւ ծննդագործարանաց մէջը եւ վրան ուռեցքներ կը գոյացունեն, որք կ'արգելուն սերմին պատրաստութիւնն ու հոսումը, եւ ջիղերուն ու երակներուն վրայ ձնելով կը զգացունեն բնական զրդութիւնը :

Իսկ եթէ գիշերային սերմներթութիւնք յաճախ տեղի ունենան, այն ատեն սովորապէս հեշտութեան զգայութիւնը տակաւ կը պակսի, եւ վերջ ի վերջոյ, ինչպէս կ'ըլլայ չափազանց զրդաւորութենէ կամ գիշութենէ ետքը, սերմը կ'ապավիճէ միզելու կամ բնական կարեաց արտահանման ատեն եւ կամ ամենաաջնջին պատճառով մը :

Կարի չափազանց ժուժկալութենէ կը վԱսուի
ոչ միայն մարմինը , այլ միտքն ալ կրնայ ենթար-
կուիլ այն ամեն հիւանդութեանց , զորա իրբեւ
հետեւանք ցոյց տուինք բնական կամ հակաբնա-
կան եղանակաւ տեղի ունեցած սեռային հաճոյից
չափազանց վայելքին : Հազուադէպ չեն այն ժուժ-
կալասէրք որք սեռամազդուսութեան , ախոնդա-
նոսութեան , խելագարութեան ենթարկուած են :
Ես տեսած եմ այրեր որք սեռային հաճոյից վա-
յելքին համար մոլեգնած եւ անոր գոհացուցման
համար ձշմարիտ կատալութեան ենթարկուած են .
այսպիսի վայրկեաններու մէջ է որ կը գործուին
սպաննութիւններ եւ ուրիշ տեսակ եղեւններ :

Զգոհացուցուած սեռային ցանկութեան սոսկալի
բայց ձշմարտագոյն պատկերը տեսնել ուզողը թող
կարգայ էօֆէն Սիւի «Գաղտնիք Փարիզու» անուն
գրքին մէջ Սիսիլիի եւ Նօտար Ֆէրրանի դէպերը,
եւ սիտի համոզուի ըսածիս :

Արանց սեռային վայելքին պիտանաւորութեան
վրայ մեկ յանի խօսի եւս

Հին թէ նոր ժամանակաց փորձառութիւններով
հաստատուած է թէ ծննդագործարանաց հասուն
վիճակին մէջ , առաղջութիւնը անվթար պահելու
համար սեռային հաճոյից չափաւոր վայելքը բա-
ցարձակապէս պէտք մ'է , եւ մարմնոյն ամէն գոր-

ժունէութեան վրայ ընդհանուր ոգեւորութիւն մը
յառաջ կը բերէ : Երբ չգործադրուի այդ , ձարպի
առատութիւն մը յառաջ կու գոյ եւ արիւնը դիւ-
րաւ կը խցուի : Յայտնի է թէ ամուսնացեալ ան-
ձինք ամուրիներէն աւելի առողջ են մտքով եւ
մարմնով , վասն զի անոնց քունը եւ արթնութիւնը ,
աշխատութիւնն ու հանգիստը կանոնաւոր են , եւ
երկարակեացք ընդհանրապէս ամրւսնացած են :
Անուրանակի է թէ վաղեմի ժամանակաց մէջ զու-
գաւորութիւնը մարդկային սեռին ամման համար
կը գործադրուէր , եւ առ այդ զգացուած դրդումն
ալ չէր այնչափ յաճախ եւ ուժգին , բայց այժմուս
սերունդը չի պատկանիր այդ հին ժամանակին .
թէազրն , պար , վէպ , նկար , ընկերութիւնք ,
պերձանք՝ զգայասիրութեան մոլորեցուցած են
զմեզ . այժմուս սերունդը հաճոյքի փոխած է սե-
րնդագործութիւնը , եւ շատ դժուար պիտի ըլլար
մեղ ժուժկալել այնչափ որ այդ գործը միայն եւ
միայն կինը յղացունելու համար պէտք ըլլար :

Երբ սեռային դրդումը կարի չափազանց ըլլայ ,
ախտ մ'է այդ որ սատիւրութիւն կը կոչուի . այդ
ալ հուժկու եւ մարմնեղ անձերէն աւելի տկար
անձանց վրայ կը գտներուի , իրբեւ հետեւանք չգո-
հացուցուած սեռային դրդման , կամ՝ առանց վա-
յելքի զանազան եղանակաւ գրգռութեանց :

Այդ ախտը կարելի է մեզմացունել տկարացու-
ցիչ գեղերով , ինչպէս երակահատութեամբ , լու-
ծողական դեղերով , զովացուցիչ ընդանքներով եւ
ներքնապէս քափուր գործածելով , եթէ՝ բնական
գործողութիւնը արդիւսած է իրեն :

Սեռային ցանկութիւն շարժող ամէն ըմպելիք սոսկալի չարիքներ յառաջ կը բերեն , եւ ասոնց մէջ կան ալ որ մահաբեր են :

Հուզաւոր , զավացուցիչ ըմպելիքները շատ անգամ կը մեղմացունեն հակաբնական դրդութիւնը . պաղ ջուրը այս բանին յարմարագոյն է , մանաւանդ՝ արտաքին գործածութեամբ :

Ցոյժ օգտակար է նաեւ փսխեցուցիչ դեղերու գործածութիւնը . օրինակի համար՝ մէկ ցորենաշափ ործացուցիչ գինիքար *) ունի մը ջրոյ մէջ հալեցունելով , այդ բաղադրաթենէն օրը մէկ քանի անգամ մէյմէկ ապուրի դգալ խմել , մինչեւ որ փսխում յառաջ գայ : Բայց պէտք է որ բժիշկը վարէ այս բոյժը :

Գ Լ Ո Ւ Խ Բ.

Տղայոց ծԱնդագործարանաց տկարացումը

Անտարակուսելի կերպով հաստատուած է թէ տղայոց վրայ ամենաթեթեւ գրդութիւն մը զօրսաւորագոյն ներգործութիւն մը յառաջ կը բերէ .

*) Brechweinstein.— զլ. tartre stibié.

Այս պատճառաւ պէտք է որ անոնց մարմիններէն , մանաւանդ ծննդագործարաններէն հեռացուցուին ամէն ի՞նչ որ կրնայ գրգռութիւն մը յառաջ բերել : Այս պարագան նախորդ գլխուն մէջ ալ յիշած ենք :

Ծննդագործարանք ջիզերու եւ երակներու առատութեամբ օժտուած են , վասն զի երբ մարմինը հասուննայ , աղոնք մարդկային նոր էակներու արտադրութեան կը սահմանափին : Այս եւ ուրիշ պատճառներով , ըստ ինքեան այնչափ դիւրագրգիռ եւ զիւրագգայ ըլլալնուն համար , անոնց վրայ ներգործող որեւիցէ գրգռութիւն աւելի եւս գրգռուն վիճակի մը մէջ կը դնէ զանոնք : Այսպէս , ահա , յարմար ժամանակէն առաջ մանչ տղայոց հազցուած նեղ տափաները , շարունակ շիմամբ կը գրգռեն անոնց ծննդագործարանները :

Ծննդագործարանաց հետ խաղալը ամենալիաս ստկար գործողութիւն մ'է , որ ուղղակի այդ մասերուն վրայ կը ներգործէ եւ կը գրգռէ զանոնք :

Այն հիւթերը որք այդ մասերուն կը պատկանին եւ պէտք է որ դէպի հոն դիմեն , գեռ ժամանակ մը ետքը պիտի զարգանան . բայց այդ տարիքին մէջ ալ պարտին մարմնոյն ուրիշ կոզմերը զարգացունել եւ տալ անոնց պատշաճ հաստանութիւն եւ զօրութիւն :

Ամէն մարդ թող իւր անձին վրայ ուշագիր թւայ եւ պիտի տեսնէ թէ մարմնոյն որ մասն զոր յաճախ գրգռէ , հիւթերը դէպի հոն կը խուժեն : Մարդ թող ոյժով մը չիէ մարմնոյն որեւիցէ մէկ տեղը , եւ պիտի տեսնէ թէ այդ տեղ պիտի կար-

մըրի եւ պիտի ոււսենայ : Այսու , ահա , կարելի է զիւրաւ բիւրունել թէ ծննդագործարանաց հետ շարունակ խաղալը հիւթերու հոսանք մը կը պատճառէ դէպ անդր :

Սակայն այդ հիւթերը ծննդագործարանաց չեն վերաբերիր դեռ , եւ չեն ալ կրնար պէտք եղածին պէս զարգացած ըլլալ : Այդ հիւթերը պաշտօն ունին մարմինը զօրացունել եւ անոր ամէն գործարաններուն կատարելագործման եւ ուժաւորման սատարել , եւ ոչ թէ անբնական եւ անկարգ զդայութիւններ յառաջ բերել , եւ հետեւարար՝ այդ նոր տարիններուն մէջ խանդարել ջղային գրութիւնը :

Նախնի ժամանակաց բժիշկները կ'ըսէին թէ արական սերմը ջիղերուն ծուծէն (լիլի) թորացող հեղուկ մ'է չեւ անոնց այս կարծէաց պատճառն ալ սա էր թէ կը տեսնէին որ սերմին յաճախակի վատնումէն ետքը ողնածուծի բորբոքում եւ ողնահիւծութիւն , մէջքի ջիղերուն չորացում ու հիւծում յառաջ կուգայ :

Էրիկ մարդուն կատարեալ չափահասութենէն առաջ—որուն նշանները ցուցուցինք նախորդ զվասուն մէջ—միտքէ անցունելու անգամ չէ այն սարագան թէ բնութիւնը անցք մը ցոյց տուած է , ուրիէ սերմը մարմնոյն ուրիշ մէկ կողմը կը փոխադրուի :

Սերնդագործութեան համար չի գործածուած եւ ներսը մնացած սերմը արեան մէջ փոխադրու ուղին չի բացուիր մինչեւ որ մարմինը չհասունայ : Երբ սերմը դեռ տհաս է եւ զայն բանի հոսեցունել ուղուի , այն ատեն անոր անցքին ծառայող երակները կ'ուսին եւ կ'ընդլայնին . եւ ու-

րովհետեւ սերմը տեղափոխող երակները լայննաւլու զօրութիւն չունին դեռ , չեն կրնար յառաջացունել զայն . հետեւապէս կը խցուին , եւ որչափ որալ տակաւ հարթուին , բայց մեծ վնաս կը պատճառեն մարմնոյն եւ զանազան հիւանդութիւններ յառաջ կը բերեն , գ. օ. փոշտի ջրգողութիւն (hydrocèle) ձուքուէց (varicocèle) . ցալքին մէջ կամ վերնամաշլին վրայ ջրալից ուռեցքներ կ'ելնեն եւ գեղձային դրութիւնը կ'եղծանեն :

Ասոնց ամէնքն ալ գրգռուն կ'ընեն մարմինը . կը սպաննեն կենսական զօրութիւնը , եւ կանխաժամ հասունութիւնն մը կը պատճառեն ծննդագործարանաց , տեսակ մը սերմնակաթութիւն , որով պատճանին մէզի հետ մերթ սերմ , մերթ սերմի նմանող ջուր մը դուրս կու տայ . երբեմն ալ գիշերային սերմներթութիւններ , որք այնչափ տկարացուցիչ են , որչափ կանխսահաս կերպով մուտքոնեն մարդկային մարմնոյ մէջ :

Գաւազանահարութեան պատիմը , զորյիշեցինք նախապէս , պէտք է կտտարելապէս ի բաց վնասէլ , եւ եթէ հարկ ըլլոյ իսկ մարմնական պատիմ մը տալ , աղուն նախատեղին առարկայ ընելու չէ առոր , վասն զի շատ մօտ է ծննդագործարանաց :

Ինչպէս ըսած ենք , գաւազանի հարութեան կակծեցուցիչ առաջին զգացումը աւելի մեծ ներգործութիւն մ'ունի , քան անոր յաջորդող ցաւը . տղան անմիջապէս հեշտանքի զգացում մը կ'ունենայ աղուլ , եւ վայ' իրեն երբ այդու գիծութեան ձանքան ձեռք առնու : Իւր տարիքին մէջ , գատողութիւնը դեռ զարգացած չըլլալուն , չի կրնար

գուշակել վերսը , եւ այդ պարագային մէջ պատիւծը , ինչպէս պիտի տեսնենք յաջորդաբար , յաճախ վաստաբեր կ'ըլլայ , քան թէ՝ օգտակար :

Երազափորձութիւնն ալ շատ անգամ հետեւանք կ'ըլլայ ադոր . ուժ տարեկան տղայոց վրայ տեսած եմ զայն եւ գիլութեան առաջքն առնելու համար փոշտակապով (suspensorium) եւ ուրիշ գարմաններավ բժշկած եմ :

Եթէ այդ տկարութեան դէմ , որ արդէն մեծ կարեւորութիւն ունի , գարման եւ զգուշութիւն չի գործադրուի , հասունութեան տարիքին մէջ երեւան կու գայ մէզասերմակաթութիւն , որ այդ ալ տակաւ սելնդագործելու անկարողութեան կը փոխուի :

Բայց այս վիճակին նպաստող արտաքին պատճառներէն զատ , կան նաեւ ներքին պատճառներ , որք սեռային դրդման հակումը ժամանակէն առաջ կը դրդուն :

Կարծր ու անմարսելի կերակուրներն ալ աղայոց մարմոյն վրայ մեծ ներդործութիւն ունին թէպէտ , եւ պատճառ կ'ըլլան ուրիշ հիւանդութեանց որք հոս յիշուածներուն հետ ասունչութիւն չունին , միայն թէ մարմոյն ընդհանուր տկարութեան պատճառաւ , այդ սխալը ծննդագործարանաց վրայ ալ զգալի կ'ըլլայ : Ես նորանոր փորձառութեամբ շատ պարագաներ տեսած եմ , ուր մասնաւորապէս անմարսելի կերակուրներով ալընդացած ոսկրաթեք աղայք իրենց միզանցքէն տեսակ մը հեղուկ արտամթորելու հիւանդութեան ենթակայ եղած են , որ այդ ալ սերմանակաթութեան ամէն հանդամանքները ցուցուցած է :

Բայց հոս կ'ուզեմ քիչ մ'աւելի զրել այն գրգռութեանց մասին , որք անմիջական ներդործութիւն ունին ծննդագործարանաց վրայ : Այդ գրգռութեանց պատճառներու կարդին մէջ մեծ տեղ կը բանեն զինին եւ համեմները , մսեղէն կերակուրները , տունկերը եւ հաւկիթը :

Չեմ ըսեր թէ տղայոց գինի տալու չէ ամենեւ չին . անոնց մէջ կան այնպիսիներ որոց առողջութեան համար օգտակար է յոյժ չափաւոր քանակութեամբ գինի խմել իրեւ գեղ . մանկանց բժիշկներուն խակ յանձնաբարած եմ զայս իրեւ զօրացուցիչ դեղ :

Ես առողջ ու առոյդ տղայոց գինի տալու անպատեհութիւնը կ'ուզեմ ցուցունել միայն : Կան շատ ծննդքներ որք իրենց մանչ զաւակաց գինի կը խմցունեն զանոնք զուարթացունելով անոնց չարժմանց վրայ հրճուելու համար : Պատժելի չարժագործութիւն մ'է այդ :

Համեմները մնունդ չեն տղայոց համար , եւ այս ոչ անոր համար թէ համեմը անոնց կենսական ոյժերն ընդհանուր գերազարդութեան մէջ դնելով կը բթացունէ զանոնք , այլ անոր համար որ համեմներուն ներդործութիւնը շատ սուր է ծննդագործարանաց վրայ :

Ասկէ զատ անոնց մէկ մեծ վլասն ալ սա՛ է թէ երբ զանոնք իրեւ գեղ գործածել ուզուի ասլա , չեն կրնար յառաջ բերել փափաքելի արդիւնքը :

Այս երկուքը (զինի եւ համեմ) չափազանց կը գրգռեն ծննդագործարանները . եւ որչափ որ շատ բժիշկներ ասոր հակառակ ըսեն եւ կարծեն թէ

այդ տարիքին մէջ ծննդագործարանք չունին որեւէլից զրդում, սակայն ես իմ փորձառութեամբա հաստատած եմ թէ յոյժ փոքր տղայք, զինի եւ համեմ գործածելէ ետքը կանդնում ունեցած են :

Առանց բժշկին տնօրինութեան պէտք չէ տղայոց տալ համեմ, զինի, շոքոլա, որպէս զի ժամանակին առաջ տեղի չտրուի ծննդագործարանաց գրգռութեան, որպէս զի բնութեան պահանջումն առաջ սիրոյ յոյզեր մուտ չգտնեն մարմնոյն մէջ :

Երբ 8-10 տարեկան տղայք սիրահարի խաղեր կը խաղան, (մանաւանդ բարեկենդանին) եւ ինքնինքնուն այնպիսի երեւոյթ մը տալ կ'ուզեն, որպէս թէ զիտցած ըլլային ադոր ներքին վիճակիները, ծնողք իրենց որդւոյ այդ արարքը տեսնելով, իրեւեւ անմեղ զրօսանք մը կը համարեն զայն, որ ընդհակառակն, արդարեւ, ամենեւին խորչելի է :

Քոյր եւ եղբայր, կամ օտար հասակալիցք եւ կամ իրարմէ մեծ ու պղտիկ մանչերն ու աղջիկները մէկտեղ պատկեցունելու ապականիչ սովորութիւնն ալ յաճախ պատճառ կ'ըլլայ ծննդագործարանաց կանխահաս զրգռութեան : Անկողնոյ չերմութիւնը ըստ ինքեան արդէն պատճառ մ'է զրգռութեան, եւ երբ էգ էակի մը — որչափ որ ալ փոքր ու փափուկ ըլլայ — արտաշնչութիւնը գայ աւելնալ ադոր վրայ . . . երբ տաքուկ մերկութեան մը հապումը գայ նոր զրգիռ մ'ալ աւելցունել, այդ ատեն անկարեջի է որ միամիտ մանուկը իւր ձղճիմ հասակին մէջ անսովոր զգացումներ ունենայ, թէպէտ՝ ո՛չ այնչափ զիտակից եւ ուժգին հաճոյք մը զոր կը զգան չափահասք :

Սա ճշմարիտ է թէ այն մանչերը որք տնական կարգադրութեամբ, անհետատեսութեամբ, աղջկանց հետ մէկտեղ կը պառկին առանց որ եւ իցէ բանի մը զիտակցութիւն ունենալու, առանց որեւէլից անվայելութիւն մը համարուելու, իսկոյն, հակառակ սեսին ազդեցիկ զրգռութենէն եւ արտաշնչութենէն, իրենց ծննդագործարանաց կացութեան վրայ զգալի փոփոխութիւն մը կը տեսնեն :

Մենք ամէն օր կը տեսնենք թէ տղայք քանի՞ն ընդունակ են վնասակար ազդեցութեանց, թէ մարդ որչափ պարտի զգուշութեամբ վարուիլ անոնց տեսաթեան ենթարկուած այն բաներուն մէջ զորս պէտք չէ որ գիտնան, եւ թէ իրենց զիւրազգայ երեւակայութիւնը որքան կը ճգնի այդ նոր բաներուն խելամտիլ եւ կազմել գաղափարներ որք զիրենք չափահասներէն աւելի ենթակայ կ'ընեն բուռն գրգռուականութեան :

Զղային զրութիւնն ու սեռային զգայութիւնը բնականէն աւելի յուզելու պատճառներուն կարգին մէջ կարելի է նաեւ իրաւամբ անցունել չափազանց ուսման եւ զիտութեան համար եղած մտաւորական յոգնութիւնները որք վարժարանաց սահետական միապետները իրենց միակողմանի ունայնամութեամբ կը պահանջնեն ուսանողներէն : Աւելի վնասակար են նաեւ լիտի վէպերու ընթերցումը, սեռերուն տարբերութիւնը չոչափոլ որեւէլից խնդրոց մէջ տղայոց սպատուիրուած կանխահաս խոհեմութիւնը : Ասկէ զատ վնասարեր են նաեւ սպատանեկայ՝ ընկերային աշխարհի մէջ շատ կապատանեկայ՝ ընկերային աշխարհի մէջ շատ կանուխէն մուտքը, անպես տղայոց՝ տանտիրով եւ

տանտիկնոջ խաղերը որոնց վրայ կը հրճուին բարձրադաս ընտանեաց անհեռատես ծնողք : Ասոր համար է որ այդ կանխահաս սերունդին, մէջ կը պատահինք երիտասարդ ծերոց, եւ ստորին դասերու, կարօտութեան հետ կուռող գասերուն մէջ ալ զօրաւոր կազմերու: Պար, թէատրոն, խնձոյք կը խռովեն պատանեկաց սեռային վիճակը . պատանեկութիւնը հեռի պահելու է աղոնցմէ :

Սյստէս՝ տղայք որ այնչափ ընդունակ են գըրգռութեան, այդ արտաշնչութեան եւ անխուսափելի եղող հպան գրգռութիւնը իրենց փոքրիկ մարմններուն մէջ յոյզեր չպիտի՞ պատճառէ, եւ վերջապէս ծննդագործարանաց վրայ ներգործելով՝ գիշութեան վնասարեր փորձութեան չպիտի՞ մատնէ զանոնք :

Ես ասիկա վեցամեռայ (!) մանչերու վրայ հաստատած եմ եւ երկար փորձառութեամբ համոզուած եմ թէ այդ պարագային մէջ թէպէտ իրական սերմի հոսում չի հետեւիր, սակայն սերմնահոսման ստնդանքով տեսակ մը արտաշնչութիւն գուրս կ'ելնէ միզանցքէն: Սյդ արտաշնչութիւնը սերմնական շոգի մ'է որ տղուն կենսական ոյժը կամ լաւ եւս ապագայ սերնդագործութեան ոյժը կը չքացունէ եւ որով կը վատնուին կազմաւորութեան յատուկ այն հիւթերը որոնցմով սերմը, որ հասունութեան մէջ նոր էակի մը ծնունդ պիտի տար, կամ կը չքանայ եւ կամ անկարողութեան կը դատապարտուի եւ չի կատարելագործուիր այնպէս որ զօրաւոր ու առողջ տղայոց ծնունդ տայ:

Երբ գիշութեան մոլութիւնը ճարակի պատա-

նեկաց կամ տղայոց մէջ, այն ատեն երեւան կուգան այն ամէն վիճակները զորս առաջին գլխուն վերջերը ցուցուած սոսկալի պատկերներուն մէջ յայտնած էինք :

Գիշութիւնը այն սոսկալի մոլութիւնն է, որով մարդկային սերունդներ կ'ոչնչանան: Բացի այն բազմատեսակ հիւանդութիւններէն, որք մինչեւ խելագարութեան կը տանին, գիշութիւնը կը պատճառէ նաեւ այնպիսի հիւանդութիւններ որք եթէ չարագուշակ հետեւանքներ ալ չ'ունենան, իրենց հետ տկարութիւն մը կը բերեն, որ այդ ալ սերմներթութեան երեւոյթին տակ տակաւ սեռային կատարեալ անկարողութեան կը տանի ենթական: Եւ որ ցաւալին է, ակարութիւնը վերջապէս այնչափ յառաջ կ'երթայ որ ոյժը կը չիջանի, եւ երիտասարդ հասակի մէջ, տգիտաբար գործազրուած մոլութեան մը համար այնպիսի տուգանք մը մահու պատիմի հաւասար է:

Այն պատանին որ այդ սոսկալի մոլութենէն զգուշանալ չի խրատուիր, այն երիտասարդը որ իւր գիրագրութեան աստիճանը ճանչնալուն պէս ետ չի կենար այդ մոլութենէն, ագոնք աշխարհի համար ապականեալ արարածներ են, կորսնցուցած են ամուսնոյ ամենագեղեցկագոյն վայելքին ակընկալութիւնը :

Ծննդագործարանաց՝ տկարացման մէկ որիշ պատճառն ալ, զոր անկարելի է ինձ զանց առնուլ, վասն զի յոյժ էական պատճառ մ'է, մէզի եւ կղկղանաց արտահանութեան անհոգ գտնուելով, զարնոնք ընդ երկար պահելն է: Սյդ վիճակը կար-

ծուածէն աւելի կը վնասէ : Մէզով լեցուն առուոյշչտին , ինչպէս նաեւ կղկղանքով լցուած նախազիին պատճառած ձնշումն ու գրգռութիւնը որ տեղի կ'ունենայ արանդամին արիւն տաճող երակներուն եւ սերմնարանին վրայ , շատ անգամ անկարելի կ'ընէ մէզին արտաքսումը , որով շատ կը նեղուի մարդ գրգռութիւնը մէկի ընելով , միզելու կարութիւնը վերահաստատելու համար *) :

Այս վերակրօնուած յոգնութեանց պատճառաւ ծննդագործարանք կը տկարանան եւ կծկուող մկանունքներու առածգութիւնը վնասուելով , միզելու ատեն սերմի արտաքսում տեղի կ'ունենայ . որով , բնականաբար կը վատնուի առնական ոյժը , եւ ադոր պատկանող հիւթերը այլ եւս չեն կրնար ժողովուիլ մարմնոյն կորով եւ տակունութիւն տալու համար :

Նորագոյն փորձաւութիւններս կը հաստատեն թէ տղայոց գեղձային դրութեան հիւանդութեանց մեծ մասը ծննդագործարանաց կանխահաս գըրդռութեան արդիւնք են : Վերջապէս խնդիր մ'է այս որուն վրայ երկար գրելու տեղը չէ հոս . բայց ես դարձեալ այս խնդիրը ծնողաց խորին ուշադրութեան յանձնելէ չեմ դադրիր :

*) Կոնակի վրայ պառկելն ալ զրգուութիւն կը պատճառէ . ինչպէս նաեւ՝ երազափորձութիւն եւ հեշտախտիկ երազներ , Քանի յանախ անհետացած են սեռային հանդին վայեկելու համար զգացուած սաստիկ զրգումներ , երբ առուոյշալ պարզուած է իւր մէզէն . Ահա այս պարագան եւս կ'ապացուցանէ . Թէ ամէն դրուեմ իբրեւ բնական համարելու չէ , վասնզի զրգուութեան անհետացումն ետքը զրգումն ալ կ'անհետանայ յանախ :

Որպէսդի տղայք մինչեւ իրենց չափահասութեան տարիքն անվթաւ , պահեն իրենց օրհնեալ ու երթանիկ անմեղութիւնը , հաստատ աշխատութիւն մը սահմանելով շարունակ գործոնէութեան մէջ դնելու է զանոնք , որպէսզի ժամանակ չունենան երեւակայական խաղերու եւ հեշտախտիկ մոտածամաց յարիլ : Ասոր համար՝ պէտք է միշտ հսկել անոնց վրայ : — Առաւուտուն անկողնէն կանուխ ելնելով պարզ նախաճաշէ մը ետքը աշխատութեան սկսիլն ու երեկոյին խոնչած անկողին մտնելը կը պահպանեն մարդս չարպներէ եւ անքունութենէ : — Պէտք է լաւ ուշագիր ըլլալ տղայոց ընկերակիցներուն : Զար օրինակ մը չուտով գլխէ կը հանէ բարի եւ անմեղ տղայ մը : Պէտք չէ երկար ատեն անզբազլ ու առանձին թողուլ տղայքը . այդ հոգածութիւնը պէտք է տարածել մինչեւ ձեմիշներուն եւ ծածուկ սենեակներուն վրայ : Պէտք է զգուշացունել տղայքը ծննդագործարանաց վնասումէն , բայց առանց բանալու անոնց միտքը գիշութեան գոյութեան վրայ , վասնզի յաճախ առաջն անգամ անոնք այդպիսի խրատէ մը կը մոլորին , գուցէ լոկ կոյր հետաքրքրութեամբ :

Տղայք պէտք է վարժուին պաղի . պէտք չէ շատ առաք պահով զգեստներ հազցունել անոնց . երկարատեւ շարժումներ ընելու են բաց օդի մէջ : Մարմնամարզի վարժութիւնը որ կը զօրացունէ մարմինը եւ կը զուարթացունէ հոգին , լաւագոյն միջոց մ'է այդ զավանի մոլութիւնը վանելու համար :

Շատ մեծ հոգածութիւն պէտք է որպէս զի տղայք առանձին չմիան , քուներնին չեկած ան-

կողին չմտնեն եւ արթննալէ ետքն ալ հոն չմնան
արթուն :

Անոնց սնունդը պարզ ու գիւրամարս ըլլալու է,
երեկոյին ալ ուշ ճաշելու չեն ։ Լաւ ջուրը վիակ ըմ-
սկելին է անոնց . գինի , խահուէ , գարեջուր վնա-
սակար են :

Եթէ տեսնլուի որ տղան վարակուած է այդ մո-
լութենէն , պէտք չէ կտամբելով ետ կեցունելու
աշխատիլ անկէ , այլ ընդհակառակն յուսազրելու
է զինքն , խորհրդակցելու է անոր հետ . եւ այդ
մոլութիւնը իրրեւ հիւանդութիւն նկարագրելով ,
ադոր առաջքն առնելու միջոցը՝ գտնելու է , վասնզի
սպանալիքն անօգուտ է : Սյդ մոլութեան վսա-
սակարութիւնն ու վտանգը շատ խոհեմութեամբ
ներկայացունելու է անոր . կրօնքն ու Աստուծոյ
ամենազիսութիւնը , որ մարդուս պատժապարտ
ամենազիսութիւնը , ամէն գաղտնի ու յայտնի յանցանքները կը տեսնէ ,
պէտք է յայտնել տղուն , եւ անոր դատողութիւնը
օգնութեան կոչելու է , Բանութեամբ կամ տղուն
ձեռքերը կապելով , այդ մոլութիւնն զինքն ետ
կեցունել փորձելը միշտ անյաջող կը մնայ :



Գ Լ ՈՒ Խ Գ.

Երիտասարդաց եւ չափահաս արանց ծննդաբան
ծարանաց տկարացումը

Կենդանի է ակաց մեծագոյն մասը ծնանելով կը
սերին , բայց ամենուն համար պէտք մը չէ զուգա-
ւորութիւնը : Իսկ մարդկային ցեղին համար , եր-
կու սեռերուն ներքին մերձաւորութիւնը պահան-
ջելի է : Սաշափ միայն որ մարդ իւր սեռային
գրգումը գոհացունելէ առաջ , այսինքն սեռային
հաճոյքը առանց վկասուելու կարենալ վայելելէ
առաջ պէտք է որ իւր աճումը լրանայ եւ ինքն ալ
գորացած ըլլայ :

Զուգաւորութիւնը այն կարեւորագոյն գործն է
զոր կը կատարեն երկու սեռերն ի մի միանալով .
ադկէ կախում ունի ընտանեաց երջանկութիւնը :
Կեանք եւ երջանկութիւն , մահ եւ կործանում
ադկէ յառաջ կու գան , եւ ասոնք ալ այն չափով ,
որչափ որ մարդ գիտնայ զսպել իւր կիրքերը , եւ
կամ սանձարձակ թողու զայն յդիանաց մէջ :

Դժբաղդաբար , զուգաւորութիւնը կատակի եւ
ծաղու առարկայ կը նկատուի . մարդ կը պարծի
իւր կանուխէն տարած յաղթանակներուն վրայ ,



առանց մոտածելու թէ այդպիսի գործերու մէջ շատ խնայողաբար վարուիլ պէտք է : Ով որ իւր տղայութեան ատեն զերծ մնացած է գիջութեան մոլութենէն , այդպիսին , մեր օրերուն մէջ , շատ կանուխէն կ'ուզէ գոհազունել ընութեան ասհանջման մա-

Սովորապէս ամէն գիծագործք, մանաւանդ երբ
սոսկալի կերպով չափազանցած են, երիտասարդու-
կան տարիքին մէջ այնչափ տկարացած կ'ըլլան,
որ շատ քիչ դրդում կը զգան գեղեցիկ սեռին հա-
մար, եւ վայ իրենց երբ մտածեն թէ կրնան ինք-
զինքնին զրկել այդ սեռէն :

Գիշագործութեան մէջ մոլորած չատ երիտա-
սարգներ սիրոյ երջանկութիւնը ճանշնալով փըր-
կուած եւ ետ կեցած են այդ մոլութենէն որ կոր-
ծանման եղըլ բերած հաստոցած էր զիրէնք :

Բժիշկը հիւանդին օգտատը միայն կէտ նպատա-
կի ունենալով իրեն , զրելու եւ խօսելու է համար-
ձակ : Ուստի ես ալ կատարեալ համոզմանիր կ'ըսեմ
թէ ամէն գիջագործ որ կ'ուզէ փրկել ինքինքն ,
թող ջանայ ընկերուհի մը ընտրել իրեն , կամ լաւ
եւս ամուսնանալ . բայց ինքինքն ուժասպառ զդա-
ցած ատենն ալ իւր ժամանակը սիրոյ առարկային
հետ խօսակցելով անցունէ . այդ ատեն իւր մարմ-
նոյն վրայ պիտի զգայ այն բարի ազդեցութիւնը որ
արդիւնքն է իւր կնոջ չնորհիւ ձեռք բերուած ժուժ-
կալութեան : Իւր մարմինը անգիտակցաբար պիտի
հնազանդի իւր մտքին : Երիտասարդն աւելի եր-
ջանիկ կ'ըլլայ երբ այնալիս կնոջ մը բազդաւորուի
որ ինքն արգէն ճանչնալով առաքինութեան բարձ-
րութիւնը , կարենայ իւր խանդր գէտ առ ան թե-

լաղբել եւ կատարելապէս փրկել զինքն իւր չար
ունակութենէն :

իսկ այն երիտասարդը որ պատահնելական այս
մեղքէն զերծ ըլլալով կը մոռնէ ընկերութեան մէջ ,
ուր պիտի սովորի ճանչնալ սէրն ու վայելքը . այդ
երիտասարդը որ իգական սեռն առանց մօտէն
ճանչյած ըլլալու լոկ իւր ծնողաց եւ ուսուցչաց
պատմութիւններէն գաղափարած է զայն , եւ այդ
միամիտ վիճակովը կը մոռնէ ընկերութեան մէջ , հոն
պիտի գտնէ այնպիսի դէմքեր որք հարիւր տարիի
առաջ գոյութիւն իսկ չունէին . նա հոն պիտի տեսա
նէ այնպիսի առարկաներ , որոնց ինչ ըլլալը մինչեւ
այդ առեն դեռ չըր գիտեր . մերկ կուրծքեր , մերկ
բազուկներ , սիրահրաւէր նայուած քններ , ոտքերով ,
ձեռքերով եւ ուրիշ կիսամերկ մասերով կատար-
ուած պըռողութիւններ : Տարակոյս չիկայ թէ այս
ամէնը կը գրգռեն , կը բորբոքեն իւր երեւակա-
յութիւնը , կը յուղեն իւր հոգին եւ վերջապէս այս
գրգռիչ պատճառներն են որ գուրսէն այնպիսի
խոռոչութիւն մը կը բերեն իւր մէջ որոն գոյու-
թեան վրաց ցայնժամ գաղափար չունէր : Այդ պա-
հուն է որ իւր ամբողջ մարմինը կ'ելեկարականանայ
անգիտակցար , խորամանգ , չարաբա-
եւ ինքն անգիտակցար , խորամանգ , չարա-
բայ եւ հեշտամոլութեան մէջ համբաւեալ աղջկան
մը , եւ կամ որ աւելի ցաւպին է , խառնակեցիկ ,
հեշտասէր կնոջ մը ճանկին մէջ կ'իյնայ եւ . . . կը
կորսուի . վասն զի ասոնք չափ չեն գիտեր եւ իւ-
րենց ձեռքն ինկած , իրենց տուկանին մէջ բռնաւած
նորընծան քիչ ժամանակին մէջ կը կործաննեն նիւ-
թապէս եւ ֆիզիքապէս , այնպէս որ խեղճը շատ

դժուարաւ կրնայ եւ կամ ամենեվին չի կրնար ինքինքը վերականգնել :

Դժբաղդաբար, ներկայ ժամանակիս մէջ առաքիւնութիւնը ծաղու առարկայ եղած է կարդ մը նորելուկներուն քոլ : Իգական սեռին հետ եղած կատակները լիրու անպարկեցութեան մը հասած են . միւս կողմանէ այդ սեռն ալ վերոյիշեալ յանկուցիչ միջոցներով, կը յաջողի առ ինքն հրաւիրել արական սեռին բարոյապէս ապականեալ ներկայացոցիչները եւ ժամանակէն առաջ վայելել կուտայ այն հաճոյքը զոր ամուսնութիւնը միայն իրաւունք ունի տալու :

Երբ, այս մեր գրութեամբ, գիշագործները փըրկելու նպատակաւ ընդհանրապէս, Սէրը կը ցուցունենք իրենց ապաւէն, անոնց սեռային մալորեալ դրգումը վերատին ուղղելու համար, անուրանավ է սակայն թէ միայն ամուսնութիւնն է որ կրնայ գոյացունել սիրոյ ճշմարիտ երջանկութիւնը . անուրանալի է նաեւ թէ մինչեւ ամուսնութիւն պահուած որբութիւնը ճշմարիտ առաքինութիւնն է: Ամուսնութիւնէ դուրս տեղի ունեցած սեռային հաճոյից վայելքը, իւր փոփոխակի գրգութիւններով կը տկարացունէ մարմինը, եւ մարդս կը մոլորեցունէ, կը տանի չափազանցութեան եւ անասնական-զգայական տոփիի . երիտասարդն ու երիտասարդուհին կ'ենթարկէ ափրոդիտեան ախտի սահմանին մէջ գտնուած զանազան տարափոխիկ հիւանդութեանց, կ'ոչնչացունէ բարոյականութիւնը եւ զզուանք յասաջ կը բերէ հանդէպ ամուսնութեան :

Թող չի կարծուի թէ սեռային դրդման զարթանումը անոր անմիջական գոհացմանը համար պահանջում մ'է :

Զուգաւորութիւնը այնպիսի գործողութիւն մ'է որ իւր ամսան մէջ գեռ անկատար եղող արական մարմույն չի յարմարիր . եւ երիտասարդ մը պէտք է հետի մնայ այդ գործէն, գէթ մինչեւ քսան տարեկանին, եթէ կ'ուզէ որ իւր հասուն տարիքին բերանին, եթէ կ'ուզէ մինչեւ իսկ իւր կէս-ձերութեան ատեն կամ մէջ եւ մինչեւ իսկ իւր կէս-ձերութեան համար բները :

Երիտասարդք միշտ աչքի տուշեւ ունենալու են սա հետեւեալ հաշիւը: 18 տարեկան հասակէն առաջ կատարուած ամէն մէկ զուգաւորութիւն, ուաջ կատարուած իրեն մէկ ամս կը պակսեցունէ հասուն կրնամ ըսել, մէկ մէկ ամս կը պակսեցունէ հասուն ու կորովի հասակէն, իմա այն ժամանակամիջոցէն որ յատկացեալ է մարմույն՝ սիրոյ հաճոյքը վայեռ համար : Սրդ, այս հաշիւը գիտնալէ ետքը լելու համար : Սրդ, այս հաշիւը գիտնալէ կամ չլուզել ինքվինքն, իւր ուղովը կրնայ զրկել կամ չլուզել ինքվինքն, իւր հասունութեան տարիքին մէջ այն հաճոյալի կառանամեայ ինքվինքնին զրկուած կը տեսնեն եւ ուասնամեայ ինքվինքնին զրկուած կ'ողբան որ այնչա՛փ նուազ լոնայողաբար վարուած են ժամանակին իրենց հաճոյից մէջ :

Բայց երբ մարդ չի կրնայ գիտադրել բնութեան դրդման, երբ առ այդ թելադրուած գրգիռներն ու ցուցադրուած հրապոյրները շատ մէծ են, երբ վարձկան աղջկները կամ անպարկեշա կիներն իշխան պատկան ու ամոթութութեան եւ կամքի անյողգող-խած են ամօթութութեան պատկան գէթ չափազանդութեան վրայ, ո՞հ, այն ատեն գէթ չափազանդութեան վրայ, կ'ոչնչացունէ բարոյականութիւնը եւ զզուանք յասաջ կը բերէ հանդէպ ամսացութեանէ ետ կինալ չափանը է եւ պատիւ համաց :

բելու չէ օրուան դիւցալն ըլլալը : Երիտասարդք մահու չափ սոսկալու են սեռային հաճոյից իրարայաջորդ վայելումէն : Կազդուրման միջոց չթողլով կրկնուած վայելքը թոյն է մարմնոյ համար եւ կրնայ խախտել առողջութիւնը հիմնապէս եւ այդ պատճառաւ բորբոքեալ թոքին երակներուն մէջ անբուժելի հիւծախսի մը սերմը զետեղել : Ես կը դողամ այսպիսի տկարացումէ մը յառաջ եկած դժբաղդութեան սահմանը գծել . եւ դժբաղդաբար բաւական թուով հիւանդներ ունեցած եմ, որոնց հիւանդութիւնը այսպիսի միակ զեղծման մը արդիւնք եղած է : Այդ հիւանդներս լալով կը պատմէին ինձ թէ ինչպէ՞ս մոլորած են վարձկան աղջիկներէ, եւ ես դժուարաւ յաջողած եմ անոնց մէկ մասն այնչափ մը բժշկել, որ իբրեւ անդամ մարդկային ընկերութեան, վերստին կարողացած են ապրիլ հանդարատ ու խաղաղի :

Մարդ թէ իւր երիտասարդութեան եւ թէ չափահասութեան մէջ պէտք չէ որ ուժասպառ ըլլալու չափ չափաղանցէ սեռային հաճողից վայելքր :

Ասկէ զատ զգուշութիւն ընելու է նաև գրգռիչ
դեղեր չդործածել, երբ որ եւ լից տկարութիւն
մը զգալի ըլլայ: Շատ վլասակար է այդ. եւ ով որ
իւր պարտասումը վերակազմուրելու գիտմամի,
գինի, համեմ եւ կամ զօրացուցիչ ուրիշ դեղեր
դործածէ, թող վստահ ըլլայ թէ քիչ ժամանակէն
կատարելապէս անկարող պիտի ըլլայ: Այդ գրգիռը
պէտք է որ բնութիւնը եւ լաւ եւս, կինը տայ.
Բայց այդ ալ ներելի եւ ոչ թէ անբնական ճան-
քով: Այն անձը որուն կինը կամ սիրուհին յատ

սլահանջող է, ժամ առաջ, այսինքն իւր կեանքին թանկագին գանձը, առողջութիւնը զսեել առաջ թող ջանայ չափառութեան սահմանին մէջ մըտ- պունել ամէն ինչ :

Զմոռնանք ըսել նաեւ թէ նա որ ժամանակ ու
շուայտելու մեծ սխալը գործելէ ետքը, կարենաց
ժամանակին բանել ինքզինքը, եւ մէկ քանի ամիս
հանգստանալ, նա նուազ կը զգայ հետեւանքը եւ
կոնալ տակաւ վերակազդորբէլ *):

Եթէ մարդ բնութեան կաթըին հետեւելով զուգաւորութիւնը միայն տեսակարութեան համար

* Ամուսնութենէ զուրս մարդ պարախի յարգել ժուժկալու Թիւնն այնչափ՝ որ կրնայ տանիլ մարմնը. Սիրոյ հանոյքը կայելելու է երբ մարդ կատարելապէս զուրաթ է, վանդի տեսա- կարարութեան զրծին մէջ ծնողաց հոգեկան վիճակը զբեթէ կա- կարարութեան փոխանցելի է նոր կազմուելիք էակին փրայ. Այդ գործին կատարման եղանակին եւ ժամանակին փրայ մանրամասն- օրէն զրած ենք «Մարզը եւ իւր ցեղը» զրթն մէչ— Կնոշ դաշ- տանի օրերուն մէջ սիրոյ հանոյքը վայելելի հեռի մեալու պէտքն ալ բացարուած է հոն Վաղեմի կրօնական օրէնսդիրը կինը իւր դաշտանին ութ օր առաջ եւ ետքը պիղդ կը համարէին. այժմուն զավուարաբարութիւնը», չի կրնար լնդունիլ այդպիսի օրէնք մը Բայց մննը ալ կարծէնք թէ պէտք է հեռի մնալ կնոշմէ անոր դաշ- տանին երեք օր առաջ. եւ այս ժուժկալութեան հետեւելու է տանին կնոշ ծննդապահութեան (լոհուսալը) ատեն. յորում մեր- ձաւորութիւնը ոչ միայն գարշելի այլ եւ յոյժ վասնաւոր է, — Շատ թժշկներ կնոշ յիշութեան տաենի զուզաւորութիւնը արգե- լելու չափ յառաջ կ'երթան. բայց մենք ալ կ'ըսնէնք թէ պէտք չէ կատարելապէս դադրեցունել զայն, միայն թէ շանալու է կարելի եղածին չափ չափարութեամբ վարովիլ, եւ տակաւ դադրեցու նել. վանդի կրնայ ըլլալ որ արիւնահոսութիւն, վիժում յառա- զայ աղիէ; Գեռատի, առողջ եւ ուժեղ կանայք, իրենց յդութեան

գործադրէր, այն ատեն շատ հազուադէպ տեղի
պիտի ունենար այդ եւ պէտք պիտի ըլլար, կնոջ
յշմալէն ետքը, դադրեցունել զայն: Բայց քա-
զաքալրթեալ մարդն այդչափով չի բաւականա-
նար, այլ սիրոյ վայելքն իբրեւ հաճոյք կը գոր-
ծադրէ եւ այդ ոլ այնչափ յաճախ որչափ որ կա-
րենայ: Բայց թէ որչա՞փ վայելքլ պէտք է այդ
հաճոյքը. այս հարցման որոշ պատասխան տալ
անկարելի է: Մէկուն համար չափազանցութիւն
համարուածը, ուրիշի մը համար պէտք մ'է: Իսկ
ամէն պարագայի մէջ, խոհեմութիւն է պէտքի
նշանին սպասել եւ այդ է որ միշտ օգտակար կ'ըլ-
լայ մարդուս: Այդ նշաններն ալ տարիքի, կազ-
մուածքի, սովորութեան, կերառութեան համեմատ
գանազան ժամանակամիջոցներու մէջ յերեւան կու-
գան: Խոհեմ է այն անձը որ իւր կատարեալ նո-
րութեան մէջ իսկ շարաթը երկու անգամէ աւելի
ֆիզիքական սիրոյ հաւասարիք չի ընծայէր իւր կնոջ:
Տկար անձինք պարտին ամիսը լոկ մէկ անգամ
վայելքլ սիրոյ հաճոյքը եւ կամ լաւ եւս երկարել
այդ միջոցը, վասն զի գարձեալ կ'ըսենք, ամէն
տեսակ չափազանցութեանց մէջ, արանց համար,

ատեն գոհ կ'ըլլան չափաւոր զուգաւորութենէ, այդու ինքնինքին
աւելի առողջ կրզզման, եւ, արդարեւ, այդ չափաւորն ալ չի վնասեր
սաղմին:— կնոջ յշութեան ատեն զզացած սեռային զրդումը եթէ
չփոխացուի, շատ վնասակար հետեւութիւններ կրնայ ունենալ:
— Ծննդապահութեան քառունքին ետքն ալ պէտք չէ գտղրեցու-
նել զայն, այդ ատեն ալ չափաւոր եղած ատեն, վնասակար ըլ-
լալէ զատ օգտակար է եւ մինչեւ իսկ կաթին բղխումը կը դիւրա-
ցունէ ըսրներ կան:

Թ. 2.

սեռային հաճոյից վայելքին չափազանցութիւնն է
որ անվրէպ կերարով վրէծ կը լուծէ:

Սյդ չափազանցութեան ամենամօտ հետեւանքն
են՝ մուարական ամէն տեսակ աշխատութեանց
տհաճութիւն: Ուզեղը որ զրգուուելով եւ իրեն
պէտք եղած հիմքերն զիկուելով ամենէն առաջ
ինքն կը վնասուի, չի կրնար պէտք եղած չափով
գործածել իւր յիշելու կարողութիւնը. մէկ խօս-
քով այն վիճակը զոր առաջին վկասուն վերջը ներ-
շապէս կը կրկնուի, երբ մարդ գերի ըլլայ հեշ-
տանքին:

Այս ամէնը շատ անգամ, չգիտութեամբ, ուրիշ
պատճառներու կը վերագրուին: Հիւանդը չի գի-
տեր թէ այդ ամէն չարեաց շարժառիթը զուգա-
ւորութեան պատճառաւ իւր ուժասպառ ըլլալն է:
Զայդ չգիտնալով դարձեալ կը շարունակէ իւր կնոջ
կամ հոմանիին հետ պատկիլ, եւ վերստին կը
գրգուէ իւր ծննդագործարանները. միտքէն իսկ
չանցուններ թէ իւր փրկութեան միակ միջոցը ժուժ-
չանցուններ թէ իւր փրկութեան միակ միջոցը ժուժ-
չանցունն է. մինչեւ անգամ կը կարծէ թէ օգ-
կալութիւնն է. մինչեւ անգամ կը կարծէ թէ օգ-
տակար կ'ըլլայ իրեն արտաքսել մաս մը իւր հիւ-
տակար թէ իւր թէ աւելորդ կերպով կը կրէ եղեր
թէն, զոր իրը թէ աւելորդ կերպով կը կրէ եղեր
թէն, մարմնոյն մէջ, եւ այսպէս ահա, փոխանակ
իւր անձը դարմանել տալու, իւր կործանումը կը
փութացունէ:

Շատ անգամ ալ այդ վիճակին պատճառը հե-
տանդապին զրգութիւն մ'է, զոր զուգաւորու-
թեան կը թելազրէ ենթակամ: կանոնաւոր գար-
թիւն մը ետքը այդ զրգութիւն ալ կը դարձի: մանումէ մը ետքը այդ զրգութիւն ալ կը դարձի:

Լեցուն առուղյացոք, պնդութիւնը եւ որովայնի ձճիներն ալ յաճախ պատճառ կրնան ըլլալ այդ գրգռութեան :

Մարդ սեռային հաճոյքը վայելել ուզած ատեն պէտք է որ առողջ ըլլայ եւ ինքինքն առողջ զգայ : Երբ ծննդագործարանք հիւանդ են, չատ ժուժկալ ըլլալու է սիրոյ մէջ : Միղանցքարորդք ման ենթակայ եղողները զուգաւորութեան համար խողովիչ եւ գրգռուն զգացում մը չե՞ն ունենար :

Ծառ անդամ ալ ջղային դրութեան չափազանց գրգռութիւնն է որ առ այդ կը թելազրէ մարդս : Ախտաժէտ անձինք պէտք չէ որ ամուսնանան, վասն զի այդպիներուն զաւակները իրենց մէջ կը կրեն մահաբեր հիւանդութեան մը սերմը : Մենք որ մեր ընտանի անասնոց բուժման համար կատարեալ առողջ անասուններ կ'ընտրենք, ինչու համար մարդուս սերնդագործութեան համար չի յարգենք այդ սկզբունքը : Սուող, զօրաւոր, գեղեցիկ եւ մոտացի զաւակները, առողջ բարեկազմ մարմնապէս եւ հոգեպէս ներդաշնակ ծնողներէն միայն կրնան սերիլ : — Իսկ գալով տարիքին՝ այրը իւր կնոջմէն 10 եւ առ առաւելն 15 տարու մեծ ըլլալու է . ադկէ աւելին ընդունելի չէ :

Զափազանց զուգաւորութեան հետեւանք եղող չառ վիճակներ յաճախ, պառաւ կիներէ, չառլաթան եւ տփէտ բժիշկներէ իրեւ ստամոքսի խանգարում, հիւթերու զեղունութիւն, պնդութիւն, ստամոքսի բեռնաւորութիւն համարուելով, մաքրողական, փսխոեցոցիչ, քրտնաբեր, լուծողական դեղերով կը դարձանուին . այդու չարիքը

սաստկանալով վերջապէս անբուժելի կ'ըլլայ, փոխանակ ժուժկալութեամբ եւ յարմար կերառութեամբ զայն իւր խանձարուրին մէջ խեղդելու եւ առողջութիւնը վերակազզուրելու :

Գիտնալ պէտք է թէ ամէն լուծողական դեղ, ինչ անուն որ ալ ունենան եւ մարմնոյն ո՛ր մասին համար որ գողծածուին, միշտ տկարացոցիչ ներգործութիւն մ'ունին : Լուծողական դեղերը այն ատեն միայն օգտակար են, երբ մարմնոյն չափազանց գրգռութիւնը տկարացման պէտք ու նենայ : Այս բացատրութեամբ դիրին է ըմբռնել թէ արդէն տկարացած մարմին մը լուծողական դեղով որչա՞փ եւս կը տկարանայ :

Ամէն ոք արդէն կրնայ ինքնիրեն դատել (երբ կանոնաւոր վարուելով, եւ միջնակարդ առողջութիւն մ'ունեցած ատեն — այսինքն երբ կատարելապէս ուժեղ ըլլալով — շարաթական միանգամես սիրոյ վայելքը իրեն չափ գրած է) թէ իւր տկարդից վայելքը իրեն այդ վայելքին չափազանցուրութեան պատճառը այդ վայելքին չափազանցութիւնն է, թէ չէ . եւ այդու կրնայ զգոյշ մնալ որ մի՛ գոյցէ իրեն տրուի այնպիսի դեղ մը որ փոխանակ իւր վիճակը բարւոքելու զայն աւելի եւս վատակակ իւր վիճակը հարցուածնել . կրնայ նաեւ որոշել թէ վերակազմարուելուն համար, պէտք է ո՛չ թէ նորէն ոյժ դուրսուելու համար, պէտք է առ այդու կրնայ իւր ստամոքսուածներուն տեղը դնել ջակորսունել, այլ կրստուածներուն տեղը դնել ջակորսունել, եւ թէ կրնայ իւր խանձարուած ստամոքսը նաև, եւ թէ կրնայ իւր խանձարուածնել, ապօռով մը կազզուրել եւ զօրացունել, մասաջրով, ապօռով մը կազզուրել եւ զօրացունել, փոխանակ լուծողական կամ մաքրողական դեղերով այդ սնունդն ալ մարսելու անկարող ընել զայն :

Նոյնպէս՝ ամենեւին հեռու կենալու է սեռային
գրդում թելագրող գեղերու գործածութենէ : Ամէն
գրգորիչք, համեմուկ (վանիլեա), քրցում (սաֆ-
րան), համեմ (պահար), եւայլն, վերջապէս ինչ որ
ալ ըլլայ եւ ինչ անուն որ ունենան, անյարմար են
նալատակին, եւ սեռային գրդման գոհացումէն
ետքը աւելի մեծ մեղկութիւն կը պատճառեն մարմ-
նոյն : Սյդ նիւթերուն յաւաջ բերած ոյժը շատ եւ
շատ նուազ է իրենց տուած վնասներէն : Զօրա-
ցուցիչ, դիւրամարս մնունդ մը ինչպէս են ձուկ,
սունկ եւայլն, եւայլն եւ չափաւոր լաւ գինի, բա-
ւական են մարմինն ուժաւորելու համար : Մարդ-
քանի՛ տարիքն առնէ, այնչափ նուազ վայելելու է
սեռային հաճոյքը, վասն զի իւր մէջ պատրաս-
տուած հիւթերն այլ եւս իւր կեանքին համար
պէտք են : Այս պատճառաւ, ահա՛, տարիքոտ
անձանց վտանգաբեր կ'ըլլայ դեռատի աղջկանց
հետ ամուսնանալը եթէ սիրոյ հեշտանաց մէջ խո-
րասուզին . . . :

Ընդհանրապէս այն ամէն անձինք որ սեռային հաճոյից մէջ բնութեան ցուցած չափէն դուրս կ'ել-նեն , իրենց գրեթէ ամէն հիւանդութեանց հիմնական պատճառը բացարձակապէս անձին այդ տկարացման մէջ վնասելու են , եւ այդպիսի անձինք առանց խորհուրդ հարցունելու բժշկին , գործածելու չեն տկարացնեցիս դեղեր :

Մարդ ինքնիրեն խորհելով ալ կընայ զատել
թէ որչափ բազմաթիւ են այն դժբաղդութիւններն
որոնց կ'ենթարկուի մարդ մաքրողական եւ փսխե-
ցուցիչ գեղերու տարածամատ գործածութեամբ։ Մեծ

բարեբաղդութիւն մը պիտի ըլլար , երբ մարդ սովորութիւն ունեցած ըլլար այդ արտահանումներէն ետքը միշտ լաւ ուտել եւ խմել , այդ դեղերուն յոռի ազգեցութիւնները կարելի եղածին չափ մեղմ մացունելու համար :

Օդին ամէն ստորիճանի բարեխառնութիւնը հաւասարապէս չի յարմարիր սեռային հաճոյից վայելքին : Զափաւոր ջերմութիւնը բարերար ազգեցութիւն մ'ունի այդ վայելքին վրայ : Շատ ցուրտը եւ շատ տաքը հաւասարապէս հակառակ են ադոր՝

Մարմնովն հոգեկան վիճակն ալ մեծ ազդեցութիւն ունի այդ գործին վրայ : Հոգեսյն զօրաւոր ցնցումներէն ետքը տեղի ունեցած գործողութեան ատեն կաթուած խոկ կրնայ պատահկւ : Ետքանդ մը գարմանած եմ որ իւր կասկածաւոր վախովը վայրկենապէս անկարողութեան ենթարկուած էր^{*)} :

Սեռային հաճոյից վայելքէն ետ կենալու է մարդ
երբ մարմնական ցաւ մ'ունի : Հիւանդաս կամ
տկար , փափկակազմ անձինք ետ կենալու են այդ
վայելքէն , մինչեւ որ երկարատեւ ժուժկալու-
թեամբ եւ ոյժատու սնունդներով մարմինն ուժա-
ռորի :

(*) Պէտք է յիշենք նաև թէ երիտասարդ ամոլիներ սեռապին հաճոյից վայելքին չափազանցութեամբ ծննդագործարանաց զանազան հիւանդութեանց կ'ենթարկուին երբեմն (իրենց սեռին յատուկ) որք սակայն ուրիշէ մը իրենց փոխանցուած կարծելու չէ:

Սեւային հաճոյից վայելքին վկանակար եւ յոյժ
տկարացուցիչ մէկ գործադրութիւնն ալ գինով վիշ
ճակի մէջ գործադրուած վայելքն է : Բայց մեր
այս ըստածը չի պատկանիր մէկ երկու գաւաթ ըմբ
պելփքէ յառաջ եկող զուարթ վիճակին . վասն զի
այդ կը բարձրացունէ միաքը եւ թոյլ կու տայ որ
զուարթութեան բաժակին ուրախութեան զաւակ
մ'ալ ընկերանայ : Մինչեւ արքեցութիւնը կը ար-
կարացունէ եւ ամբողջ մարմինը կ'ապահանէ : Առ
մուսնացեալ անձինք մատնաւոր զգնւշութիւն ընե-
լու են որ գինով վիճակի մէջ չվայելեն սիրոյ հաւ-
ճոյքը : Նոյնպէս՝ եւ ոչ մէկուն խորհուրդ կու տամ
արքեալ վիճակի մէջ իւր ինոջ քով պառկիլ, վասն
զի աղկէ գարշում յառաջ կու զայ եւ ամողք պար-
տաւոր են իրարու հանգէպ այնպիսի վարմունք
մ'ունենալ որ այդ գարշանքը գոյութիւն չառնու :

Ակտի գիրքելու ընթերցումը իւր առողջութեան հոգ տանող անձի մը համար ընդունելի չէ : Սյդ-պիսի ընթերցումնք թող թէ կը խրամատեն բարոյականին հիմերը , այլ որ անուբանալին է , այդ-պիսի նկարազրութիւններ չափազանց կը ներդործեն մարդուս երեւակայութեան վրայ . մանաւանդ՝ երբ այդ գիրքեր պատկերներով ալ զարդարուած ըլլան — ինչու որ են սովորաբար — այն տեսն բնութենէն եւ խրականութենէն աւելի սասափի ներդործութիւն կ'ընեն , վասն զի մարդուս երեւակայութիւնը աւելի մեծ կը նկարէ հաճոյք մը քան որչափ չէ իրականապէս : Սյդպիսի ընթերցումնք եւ պատկերներ ոյնչափ կը զրգան երեւակայութիւնը որ սերմը ինքնաբերաբար կը հոսէ : Գրգ-

ռականութեան չափազանցութիւն մէջ այդ որ իւր
հետ կը բերէ վասակագոյն տկարացում մը :

Այս պատճառութեան ահա՛, հեռու մնալու է այդ-
պիսի մոլորեցուցիչ գիրքերու ընթերցումներէ՛, եւ
մասնաւորապէս զգուշանալու է այն տեսակ պատ-
կերներէն, եւ եթէ ուրիշ մը ցուցունէ, նայելու չէ
անոնց որպէս զի մի՛ գուցէ երեւակայութիւնը
զրգուելով պատկերն իրականին չափ զգալի ըլլայ
իրեն: Մարդ ագիկ աւելի զնաւակար բան մը չի
կրնար ընել անձին: Երիտասարդի մը համար աւելի
աղջկէ է արջիկ մը սիրել քան թէ իւր դրդումը գո-
հացունելու համար այնպիսի միջոցի մը դիմել որ
կրնայ գիշութեան գարշելի ճանբաւն մոլորեցունել
զի՞նքն :

Իսկ գալով այդպիսի անառակութեանց անձ
նատուր եղող ամուսնացեալ մարդուն, զիտէք նա
ինչ բանէ սոսկալու է : — Նախ եւ առաջ նա ընտա-
թեան մէջ, իմա՞ իրականին մէջ չի գտներ իւր ե-
րեւակայածը, վասն զի նկարիչը միշտ կը գեղեց-
կացունէ իւր առարկան եւ չի ցուցուներ թերու-
թիւնները : Ամուսնացեալ այդ լսելց մարդն ալ
կարծելով թէ պակասաւոր է իւր կինը, այլ եւս
չի շատանար անով եւ կ'իյնայ այն մոլորութեանց
չի շատանար անով եւ կ'իյնայ այն մոլորութեանց
մէջ որ կը պղծեն, կը բթացունեն իւր գդայարանք-
ները, կը կործանեն իւր ամուսնական սրբութիւնը,
կը խորտակեն իւր ընտանեկան շնչնքին կիմերը եւ
առ յաւէտ ապերջանիկ կ'ընեն զինքն :

